

5127

Յ. Լ. ՄՈՒՏԻ

ՔԱՐՈԶՆԵՐ ՏԵՏՐ Ա

«Ահա ես ձեզի մեծ ուրախութեան աւետիս կու տամ,
որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ:»

Զուկ. Բ. 10



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

1928

241

Մ-98

291
5-98

Տ. Լ. Մ Ո Ւ Տ Ի

171 OCT 2009

ՔԱՐՈԶՆԵՐ

«Ահա ես ձեզի մեծ ուրախութեան աւետիս կու տամ,
որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ:»

Ղուկ. Բ. 10



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
1928

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ «ՍԷԼԱՄԷԹ»

ԴԱՆԻԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Պայպու Հառեզ Թիւ 2, Ֆինճանճըլար Եօզուշու, Կ. Պոլիս

ՔԱՐՈԶՆԵՐ

(Մ Ո Ւ Տ Ի)

Ո՞ՒՐ ԵՍ

Ծննդոց Գիրքին երրորդ գլխուն իններորդ համարին այս հարցումը շատ անձնական է և կ'ուզուի ամէն դասակարգի և ասպարէզի պատկանող այրերու և կիներու և ամէն հասակէ մանչ և աղջիկ տղայոց: Առաջին հարցումն էր զոր Աստուած մարդուն ուղղեց անոր անկումէն ետև: Ազամայ բոլոր զաւակները լսեցին զայն 6,000 տարիներուն մէջ որ անկէ ի վեր անցան: Ամէնուն ալ եկած է: Շատերուս եկած է շատ անգամ գիշերուան լուռ պահերու, ցերեկուան բազմադրաղ ժամերու մէջ սա հարցումը. «Ո՞ւր եմ ես, ո՞ւր կ'երթամ»: Ուստի, ընթերցող, կը փախաքիմ որ իբր անձնական հարցում նկատէք զայս: Քանի մը վայրկեան լրջօրէն խորհելով ջանանք պատասխանել անոր: Կարգ մը մարդիկ մեծ հոգ կը տանին թէ ի՛նչպէս կ'երեւին իրենց ընկերներուն առջեւ: Թէ աշխարհ ի՛նչ կը խորհի մեր վրայ՝ շատ քիչ կարեւորութիւն ունի: Չարժեք աշխարհի համար հոգ ընել: Հանրային կարծիքն արժէք չունի: Աշխարհի կարծիքին կարեւորութիւն տալու չենք: «Ո՞ւր կ'երթաս» հարցումն է որ մեզ նեղելու է: «Ի՞նչ պիտի ըլլայ ապագադ»: Թող այս հարցումը մեզ չարժէ և քննենք մեր սիրտերը, և Հոգին Սուրբ

691-93

քննէ մեզ, որպէս զի երեկոյին, դեռ չքնացած, գիտնանք թէ ո՛ւր ենք Աստուծոյ առջեւ և ո՛ւր պիտի ըլլանք յախտեանականութեան մէջ: Օր մը մարդ մը եկաւ ինձի և սա պատմութիւնն ըրաւ: Գիշեր մը, ըստ, բախտախաղ խաղաց և կորսնցուց իր ամբողջ գրամը: Երբ պանդոկ դարձաւ, չքնացաւ շատ՝ կէսգիշերով ըլլալով և տեսակ մը խղճի խայթ զգալով իր արարքին համար: Հետեւեալ առաւօտ, որ կիրակի էր, երաւ անկողնէն: Անհանգիստ էր, չէր կրնար բան տեսել: Նախաձաշին ձեռք չզպցուց: Թշուառ էր և խորհեցաւ վերջ տալ իր կեանքին: Կէսօրէ ետքը պտոյտի երաւ, և եկաւ հոն ուր ես կը քարոզեմ: Մանողնեքուն մեծ բազմութիւնը տեսնելով՝ ինք ալ փորձեց մտնել: Սակայն դրան առջեւ սպասող ստիկան մը զպացուց թէ չկրնար մտնել, վասն զի կիներու յատուկ ժողով էր: Դարձաւ անկէ և զարձեակ շրջագայելէ ետեւ պանդոկ իջաւ ու ձաշեց: Երեկոյին պտըտելով դարձեակ եկաւ քարոզութեան նոյն վայրը: Այս անգամ նշմարեց որ այրեր կը մանէին: Ներս մտնելով մտիկ ըրաւ երգեցողութեան և լսեց «Ո՛ւր ես» բնարանը: Ուղեց մեկնիլ: Ոտքի երաւ երթալու համար, և ահա նորէն ականջին հասաւ «Ո՛ւր ես» հարցումը: Չափազանց անձնական է այս, ըսաւ իր միտքէն, անհաճօյ բան: Ուղղուեցաւ գէպ ի դուռը: Բայց երբ մուտքէն վեր գանուող նստարաններու երրորդ կարգը հասաւ, զարձեակ լսեց «Ո՛ւր ես» հարցումը: Անշարժ կեցաւ հոն, վասն զի այս անգամ անդիմադրելի ուժով եկած էր այն և Աստուած գտած էր մարդը: Գնաց պանդոկ և զիշերն ի բուն աղօթեց, և հիմա պայծառ ու փայլուն լոյս է ինք: Այս երիտասարդը որ առեւտրական շրջիկ պաշտօնեայ էր, իր հայրենի գիւղը դարձաւ, ուր ամենամեծ ստահակներէն եղած էր—դարձաւ և իր բա-

րեկամներուն ու ծանօթներուն մէջ շրջագայելով Քրիստոսի համար վկայութիւն տուաւ այնքան եռանդով ու արդիւնաւորութեամբ որքան իր վարքը հակառակ եղած էր անոր: Երանի՛ թէ քնաբանս իմ ընթերցողներուս մէջ գտնէ Աստուծոյ հեռացած երիտասարդ մը և այնպէս ազգէ անոր որ դառնայ և ընդունի փրկութեան հրաւերները:

Երեք գասակարգի պիտի բաժնեմ իմ ընթերցողներս: Մի վախնաք, երեք խումբի պիտի չբաժնեմ ձեզ: Առաջին գասակարգը կը կազմեն անոնք որ կը գաւառնին թէ Քրիստոսնեայ են: Չեմ գիտեր թէ ո՛վ են ատոնք և թէ անկի՛ղձ են: Այլ իրենց և Աստուծոյ ծանօթ է, մեզի չպատկանիր: Միւս գասակարգը կը կազմեն ուրացողները, անոնք որ բարի գաւակներ էին, բայց յետոյ կրնակ դարձուցին Աստուծոյ և մեղքի գաւառները թափառեցան: Երրորդ գասակարգը կը կազմեն անոնք որ երբեք չփրկուեցան, Հօգիէն չճանան և չճանային Քրիստոսի գալ:

Հիմա, ով բարեկամներ, որ կը գաւանիք թէ Քրիստոսնեայ էք, խօսքս ձեզի է: Մենք որ Քրիստոնէութիւն կը գաւանինք՝ մեր քարոզութեան համաձայն կ'ապրի՞նք: Աստուած ներէ ինձի, կ'զգամ թէ ես անոր համար չեմ ընել ինչ որ պարտիմ: Ես իմ անձս բացառութիւն չեմ համարիր: Չեզի որ կը գաւանիք թէ Քրիստոնեայ էք, ձեզի անձնական է այս հարցումը, «Ո՛ւր ես»: Կը հաւատա՞ք ձեր քարոզութեան, կ'ապրի՞ք այն կեանքը զոր ապրելու էք իբրև Քրիստոնեայ: Եթէ ապրէիք, բիւրաւորներ դարձի պիտի գային ձեր քաղաքին մէջ: Ուրովհետեւ հոգ չէք տանիր գործադրել ինչ որ կը քարոզէք, մարդիկ կը ձանձրանան ձեզմէ, աշխարհ կը զգուի ձեզմէ և կ'ըսեն անոնք թէ, եթէ մենք իսկպպէս զգայինք ինչ որ կը խօսինք ու կը գաւանինք, աւելի եռանդով

պիտի գործէինք իրենց փրկութեան համար: Ես ալ իրաւունք կու տամ անոնց: Եթէ Քրիստոնեաներ արժանապէս զգային իրենց կոչումը, ամէն եկեղեցի եւ ուանդով պիտի բոցավառէր հողիներու փրկութեան համար: Գաղջ են անոնք: Եկեղեցին իր ուղիղ դիրքին մէջ է այսօր: Իր քարոզութիւններուն հաւատարմօ՞ք է: Միթէ մեր Քրիստոնէական վարքով ու կենցաղով աշխարհի հետ այնպէս չենք խառնուիր որ աշխարհ ճանճրացած է մեր կեղծ դաւանութիւններէն: Եթէ աշխարհ չտեսնէ որ մենք մեր դաւանութիւններուն համաձայն կը գործենք, կ'ըսէ թէ Քրիստոնէութիւնն իրաւան չէ: Օր մը երիտասարդ մը, դաւանեալ Քրիստոնեայ, ուրիշ երիտասարդի մը կը խօսէր այս նիւթին վրայ և սա պատասխանն ստացաւ. «Ես ամենեւին չեմ հաւատար ձեր Քրիստոնէութեան, չեմ հաւատար ձեր խօսքերուն, չեմ հաւատար ձեր Սուրբ Գիրքին»: «Կը չափազանցէք», ըսաւ Քրիստոնեան: «Ոչ», յարեց երիտասարդը. «ամէնը կեղծիք է, ամէնը ալ կեղծաւոր էք»: Քրիստոնեան, գիտնալով թէ ան մայր մը ունէր Քրիստոնեայ, ըսաւ. «Ձեռ ուղեր հարկաւ բռնել թէ մայրդ ալ կեղծաւոր է»: «Անշուշտ ոչ», ըսաւ երիտասարդը, չուզելով ընդունիլ թէ մայրը կեղծաւոր է: «Կեղծաւոր չէ ճշտիւ, բայց չհաւատար իր դաւանութեան: Եթէ հաւատար, վստուց պիտի խօսէր ինծի իմ հոգիիս վրայ:» Այդ երիտասարդը, բարեկամ, յաղթող հանդիսացաւ: Եւ այս է տասնէն իննիս վիճակը — չենք գործադրեր ինչ որ կ'ըսենք թէ կը հաւատանք: Քրիստոսի խաչն իրապէս առած չենք, հին մարդը հանած և նորը հաղած չենք, ճշմարտապէս Քրիստոս Յիսուսի մէջ չենք ապրիր և աշխարհ ճանճրացած է մեզմէ և կը զայթակղի մեր պատճառով: Եթէ ամէն մասամբ չգործադրենք ինչ որ կը քարոզենք կամ կը դաւանինք, և

չաշխատինք ազգել ուրիշներու վարքին վրայ և Քրիստոսի պէս ապրիլ Քրիստոնէական սկզբանց համաձայն, աշխարհ պիտի շարունակէ մոլորիլ: Քանի մը տարի առաջ Սմերիկեան քաղաքի մը մէջ վաճառական մը մեռաւ, և մինչ անթաղ կը մնար դեռ, ինծի բան մը պատմուեցաւ զոր երբեք պիտի չմոռնամ: Երբ զայն խնամող բժիշկը տեսաւ թէ այլեւս անյոյս է անոր վիճակը, պարտք սեպեց Քրիստոսի վրայ խօսիլ անոր: Այս բժիշկին նմանող շատ Քրիստոնեաներ կան: Կ'սպասեն մինչև այն ժամը, երբ մարդ անդիի աշխարհը պիտի չուէ, երբ անոր կեանքի ճրագը պիտի մարի կամ մահուան հանդիւրդ կ'սկսի կոկորդին մէջ, և այն ժամանակ կ'սկսին Քրիստոսի վրայ խօսիլ: Բժիշկը մահամերձին մօտենալով սկսաւ խօսիլ Յիսուսի վրայ, Քրիստոնէութեան գեղեցկութիւններուն և այն փրկութեան վրայ զոր բերաւ ամբողջ աշխարհի: Վաճառականն հանդարտօրէն մտիկ ըրաւ և ապա հարցուց. «Ո՞րքան ժամանակ է ի վեր գիտէք այս բաները»: «Տարիներէ ի վեր Քրիստոնեայ կ'մ ես», պատասխանեց բժիշկը: «Ի՞նչ տարիներէ ի վեր Քրիստոնեայ էիք և գիտէիք այս ամէնը: Ինչո՞ւ ուրեմն աւելի կանուխ չխօսեցաք ինծի:» Բժիշկը սուս գնաց ու առանձնացաւ հանդէսը համար, բայց չկցաւ քնննալ: Մահամերձին հարցումը կը թընդար անոր ականջներուն մէջ: Չկրցաւ բացատրել թէ ինչո՞ւ աւելի կանուխ չխօսեցաւ ինք: Բայց հասկցաւ թէ իր սկզբունքներուն անհաւատարիմ եղած էր: Դարձեալ գնաց մահամերձին քով, որպէս զի զայն յորդորէ Քրիստոսի փրկութիւնն ընդունիլ: Բայց երբ խօսիլ սկսաւ, մարդը լսկ պատասխանեց տխուր ու տկար ձայնով, «Ինչո՞ւ աւելի կանուխ չխօսեցար»: Ո՞ն, բարեկամներ, քանի՞ քանիներս այս բժիշկին նման կը շարժինք: Պէտք է որ Քրիստոսը չճանչցող ձեր ընկերոջ երթաք

ու ըսէք թէ ան ի՛նչ ըրած է մեզի համար : Եթէ չգտումէք աւետար, անոնք Սատանային թելագրութիւններուն մտիկ պիտի ընեն և մենք մարդոց կարծել պիտի տանք թէ Քրիստոնէութիւնը կեղծաւորութիւն է և թէ Քրիստոս աշխարհի Փրկիչը չէ : Եթէ կը հաւատաք թէ Քրիստոս Փրկիչ է, ինչո՞ւ ամէնուն չձանուցանենք այս փառաւոր ձշմարտութիւնը : Անգամ մը ես պզտիկ պատմութիւն մը կարդացի լրագրի մէջ և միտքէս չելլեր : Հայր մը իր պզտիկ զաւակը արտերը տարաւ օր մը : Ինք պատկեցաւ գեանին վրայ, մինչ մանկիկը կ'ըրօմուր խոտի և ծաղիկ տերեւներ փրցնելով : Քիչ յետոյ քունը տարաւ և երբ արթնցաւ, առաջին մտածումն եղաւ «Ո՞ւր է զաւակս :» Չորս դին նայեցաւ, ամէն կողմ փնտռեց, բայց չգտաւ զայն : Արտերը, լեռները չըջեցաւ, բայց ի գուր : Վերջապէս եկաւ գահաւանդի մը քով և վար նայեցաւ քարերուն ու ապառաժներուն մէջ : Հոն էր մանկիկը, պտկած : Վար վազեց, վեր առաւ զայն ու համբուրեց ձերմապէս, բայց մեռած էր : Խղճի խայթով լեցուեցաւ և ինքզինք գատապարտեց իր սպանիչ իր մանկան : Այս պատմութիւնն ալ կը պատշաճի իրենց ընկերներուն լաւ հոգ չտանող Քրիստոնեաներու :

Վերջերս մօր մը համար լսեցի թէ միշտ կը ծաղրէ մեր քարոզութիւնը : Ժողովներու մէջ կը խնդայ, կը կատակէ և արհամարհանքով կը նայի քարոզիչներու վրայ : Սակայն արեւցող սրգի մը ունէր : Եթէ այդ կիներ ժողովներուն օգնէր, կարելի է որ անոնք իր որդին արեւցողի գերեզմանէն ազատելու միջոց ըլլային : Մայրեր և հայրեր, դուք մեծ պատասխանատուութիւն ունիք ձեր զաւակներուն երեսները Սիօնի կղզմը դարձնելու մասին : Բարեկամներս, լուրջ հարցում մը կ'ուղղուի ձեզի այսօր, ձշտեցէք թէ ո՞ւր կը գտնուիք Աստուծոյ առջև :

Երկրորդ գատակարար որոնց կ'ուզեմ խօսիլ՝ ուրացողներ կամ ուղիղ ճամբէն չեղողներն են : Դուք հաւանօրէն հեռաւոր քաղաքէ մը եկաք և յանձնարարական մը ունիք եկեղեցիի մը ուղղուած : Բայց երբ այդ եկեղեցին եկաք, չգտաք այն սէրը զոր կ'ակնկալէիք, այն համակրանքը զոր կ'սպասէիք և ուստի ա՛լ չմտեցաք անոր : Ձեր գրպանը պահեցիք յանձնարարականը չարաթնելով, տարիներով, թերեւս ձեր սնտուկին խորը նետեցիք և բոլորովին մոռցաք ձեր եկեղեցական կեանքը և յանձնարականն ալ կորուսեցաւ : Հիմա բարեպաշտ չէք, բայց երջանիկ ալ չէք : Վերջին հինգ տարիներուն մէջ շատ ճամբորդեցի ես, և երբեք չտեսայ մէկը որ կրօնէ հեռացած ու երջանիկ եղած ըլլար : Այսպիսի մէկուն խիղճը միշտ կը խռովէ զայն : Կրնայ իսկ յաջող և հարուստ վաճառական մը ըլլալ, բայց իր հարստութիւնն ու դիրքը չեն կրնար գոհացնել իր սիրտը : Եթէ ընթերցողներուս մէջ կայ մէկը որ թողած է իր կրօնքը, թող դարձի գայ : Լսեցէք ձայնը որ կ'ըսէ, ետ եկէք : Չկայ մեղք մը զոր գուք գործած էք և զոր Աստուած յօժար ու կարող չըլլայ ներել : Եթէ կայ մէկը որ կը թափառի մեղաց լեռներուն վրայ, թող գտնայ և երեսն Աստուծոյ դարձնէ : Ան կը լսէ ձեր յանցանքները, կը ներէ ձեր անհաւատարմութիւնը, սիրով կ'ընդունի ձեզ իր գիրկը և երջանիկ կ'ըլլաք իսկոյն : Նայեցէք կրօնքէ պաղած մարդուն տունը : Ազօթք չկայ հոն, ընտանեկան պաշտամունքի սեղան չկայ հոն : Աստուծոյ տեղ Բահաղի արձանը կանդնուած է, ինչպէս էր Եգիպտի օրով : Խաղաղութիւն չունին, խիղճը կը նեղէ զանոնք : Գիտեն թէ իրենց ընտանիքը չեն կրթիր արժանապէս : Այս չէ՞ այսօր ընթերցողներէս շատերուն վիճակը : Ով հաւատուբայ, գիտես թէ կեանքդ ի՛նչ է, բայց ի՛նչ պիտի ըլլայ յաւիտենականութիւնդ,

եթէ կուտիս Տէրոջդ դէմ, որ կ'սպասէ քեզի բարիք միայն ընելու համար:

Երիտասարդ մը քաղաք գնաց իր հօրը ցորենը ծախել: Հայրը աւետարանի պաշտօնեայ էր: Որդին ծախեց ցորենը և երբ վերադառնալու ժամանակն հասաւ, չգնաց տուն: Հայր և մայր գիշերն ի բուն արթուն մնացին՝ ամէն վայրկեան կառքին ձայնն առնելու յուսով: Բայց սպասեցին ու սպասեցին, և չեկաւ որդին: Հայրն այնքան անհանդիստ եղաւ որ ախոռը գնաց և ձին համեակով քաղաք ուղեւորեցաւ: Երբ հոն հասաւ, իմացաւ թէ որդին ծախած էր ցորենը, բայց այնուհետեւ չէր տեսնուած: Ինք հետեւցուց թէ սպաննուած է: Սակայն հարցնելով փնտռելով հասկցաւ թէ խաղաբան մը գացած և բոլոր դրամը կորուսած է: Ուրիշներու դրողմով, ձին ու կառքն ալ ծախած է կորուստը դարձանելու յուսով և եղած է ճիշտ նման Երբիքովէ Երուսաղէմ գացող մարդուն, որ աւաղակներու պատահելով կողոպտուեցաւ և ճամբուն վրայ թողուեցաւ մերկ: Չեղմէ շատեր այս երիտասարդին պէս կը խորհին, այսինքն կը կարծէք թէ ողելից ըմպելի վաճառողներ և խաղամոլներ ձեր լուսագոյն բարեկամներն են, երբ ահոնք կը խրեն ձեր խաղաղութիւնը, ձեր առողջութիւնը, ձեր հոգին և դրամը — այս, ամէն ինչ որ ունիք — և ապա կը փախչին: Դառնանք մեր պատմութեան: Հայրն ի զուր փնտռելէ հոտ իր որդին՝ տուն դարձաւ և իր կնոջ պատմեց ինչ որ լսած էր: Սակայն չստաւ հանդարտ: Ճամբորդի ցուպն ու տուրակն առնելով տեղէ տեղ գնաց և քարոզիչներէ թոյլտուութիւն առնելով իրենց տեղ քարոզել՝ միշտ պատմեց թէ ինք որդի մը ունէր զոր կեանքէն աւելի կը սիրէր, և իր հասցէն տալով ազատեց որ եթէ երբեք անոր վրայ լուր մը առնեն՝ հաճին իրեն հաղորդել: Վերջապէս շատ պտրտելէ

հոտ գտաւ որդւոյն հետքը և իմացաւ թէ ո՛ւր գացած է: Տուն դարձաւ, բայց նառակ չգրեց որդւոյն: Ոչ, գործերը կարգի դրաւ և գնաց փնտռել զայն: Այս կը լուսարանէ ինչ որ Աստուած ըրաւ մեզի համար: Օր, ժամ, վայրկեան չանցնիր, երբ Աստուած մեզ չփնտռէ: Երբ հայրը հասաւ այն քաղաքը ուր որդին գացած էր, քարոզելու թոյլտուութիւն առաւ և լրագիրներու մէջ ծանուցում դրաւ սա յուսով թէ իր որդին կ'իմանայ: Կիրակի օր քարոզեց և օրհնութիւն տալէն հոտ ունկընդիրները մեկնեցան: Բայց նշմարեց մէկը որ անկիւն մը կ'սպասէր: Անոր քով գնաց և տեսաւ թէ իր որդին է: Չյանդիմանեց զայն, չգատապարտեց զայն, այլ սիրով ողջագութեց, իր կուրծքին վրայ սեղմեց և առաւ տուն տարաւ: Այս կը լուսարանէ ինչ որ Աստուած կ'ուզէ մեզի ընել, և ընել այսօր իսկ: Ան իր սէրը, իր թողութիւնը, կը մատուցանէ մեզի:

Ուղիղ ճամբէն չեզոյները մասնաւոր պայմանի մը տակ են: Իրենք պէտք է կտ դառնան, ինչպէս իրենք հեռացան զացին: Իրենք էին հեռացողները, ոչ թէ ան: Ուրախութիւն պիտի ըլլայ ձեր սրտին մէջ և ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը, եթէ հիմա դառնաք անոր: Եթէ անձնական բարեկամ նկատելիք զԱստուած, հեռացող չէր գտնուեր: Տարիներէ ի վեր ես ինծի կանոն ըրած եմ Տէր Յիսուս Քրիստոսի հետ վարուիլ իբր բարեկամի հետ: Անոր դառնանքը, անոր սոսկ վարդապետութիւնը չէ որ ունինք, այլ բուն իսկ զինքը: Այն բոլորէն որ կ'ընդունինք զՔրիստոս, իբրև բարեկամ ընդունելու ենք: Երբ տունէն կը մեկնիմ, մնաք բարով կ'ըսեմ կնոջս ու զաւակներուս, բարեկամներուս ու ծանօթներուս: Բայց երբեք չլսեցի որ հաւատաքէ հեռացող մը ծունկի վրայ գալով ըսած ըլլայ. «Ով Աստուած, տասը տարիէ ի վեր քովդ եմ: Քեզի ծառայել ձանձ-

բալլի և միօրինակ է: Կու գամ հրածեչա տալ քեզի: Մնաս բարով, Տէր Յիսուս Գրիստոս» Երբեք այսպիսի բան չլսեցի: Չեզի բան, ի՛նչպէս կ'երթան: Պարզապէս կը փախչին: Ո՛ւր ես, ով հաւատուրաց: Անգամ մը նայէ տասը տարուան վիճակիդ: Երջանկութեան տարինն՝ ր էին անոնք: Խաղաղութեան տարինն՝ ր էին: Արձագանդը կը պատասխանէ տասն հաղար անգամ Ոչ: Անոր վերադարձէք անմիջապէս: Հոգ չէ թէ ձեր անցեալն ի՛նչպէս է, ինք փրկութիւն կու տայ ձեզի:

Գանք երրորդ դասակարգին — չփրկուածներուն: Կ'ընդունիմ թէ դաւանեալ Գրիստոսնաներն իրենց թիւրութիւններն ունին: Մենք չառ հեռի ենք ըլլալէ ինչ որ մեր պարտքն է ըլլալ: Սակայն ատոր համար միթէ դուք գալու չէ՞ք: Մենք մեզ չենք քարոզեր, մենք մեզ իբրև փրկիչ չենք ներկայացներ: Եթէ այդպէս ընէինք, կրնայիք չգալու պատճառանք ընել զայդ: Այլ մենք Գրիստոսը կը քարոզենք: Արդ, ով չփրկուածներ, չէ՞ք ուզեր գալ: Ես չեմ գիտեր թէ դուք ո՛վ էք, բայց եթէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ ծնած չէ և ձեզի չըսեր թէ դուք Աստուծոյ գաւակներն էք, այս կ'սպալուցանէ թէ դուք Աստուծոյ ծնած չէք: Կը սիրէ՞ք ձեր թշնամիները: Ուրախութիւն, խաղաղութիւն, համբերութիւն, քաջասրտութիւն և սէր ունի՞ք: Եթէ ունիք Հոգիին պտուղները, ունիք այդ յատկութիւնները: Եթէ չունիք, ծնած չէք Հոգիին: Բարեկամներ, դուք ձեզի հարցուցէք սա հարցումը միայն. «Ո՛ւր եմ ես» Ահա ես հոս չըջապատուած եմ ազօթող բարեկամներով: Երբեմն կ'զգամ թէ հարցումն ինծի կու գայ և գետին կ'ընայ, երբեմն ալ թէ ուղղակի սրտին կը դռնէ: Այսօր կարծես միջոցորտին մէջ կը թրթռայ այն և ամէն կողմ կ'զգանք անոր ազդեցութիւնը: Սա մայրը կ'ազօթէ, թերևս, մտրած սրբույ մը վերադարձին համար: Սա

եղբայրը կ'ազօթէ թերևս ժամերէ ի վեր, «Ով Աստուած, Հոգին Սուրբ գայ իմ եղբորս» Սիրելիներ, «Ո՛ւր ես», հարցնենք իրարու: Սիրելի մօր մը, սիրելի կնոջ մը եռանդուն, գողտջուն ազօթքներն՝ ան կը զիմարէք արգիօք: Անկեղծ ըլլանք: Միթէ ընթերցողներուս մէջ չկա՞ն այնպիսիներ սը հինգ, տասը, տասնըհինգ, քսան տարի առաջ խոստացան Աստուծոյ ծառայել: Ահա այդ խոստումներն անցած գացած են, նմանապէս այն հինգ, տասը, տասնըհինգ, քսան տարիները, իսկ դուք աւելի չէք մօտեցած: Ո՛ւր ես, ով մեղաւոր: Կ'արձամարհնօ ողորմութեան բոլոր հրաւերները: Կըրնա՞կ կը դարձնես Սք. Հոգիին և կը ծաղրնօ ու կը խընդամօ անոր վրայ: Եթէ այդպէս է, ողորմութեան Աստուածը բռնէ քեզ, ողորմի հոգուց և փրկէ քեզ: Վերջին երեք տարիները կեանքիս ամէնէն լուրջ տարիներն եղան: Մարդուս կեանքը բլուր ի վեր և բլուր ի վար ձամբորդութեան կը նմանի: Եթէ ինծի սահմանուած տարիները լրացնեմ, բլուր ի վար կ'երթամ ես: Ծատերդ բլուրին գազաթն էք և չէք փրկուած: Պահ մը կանց առէք և բլուր ի վար նայեցէք այն ձամբուն որմէ եկաք: Եւ նայեցէք դէպ օրօրոցը: Չէ՞ք յիշեր թէ քարոզները զորս կը լսէիք տասը, տասնըհինգ տարի առաջ՝ կը շարժէին ձեզ: Դուք կ'ըսէք, երբ այն ժամանակներուն կը նայիք, «Մենք ազէկ քարոզներ կը լսէինք», աւելի ազէկ ու եռանդուն քարոզիչներ» Կը սխալիք: Աւետարանը նոյն է երէկ և այսօր և նոյնքան ազդեցիկ է որքան էր ուէ ժամանակ: Թերութիւնն Աւետարանի պաշտօնեաներուն չվերարեւրի, ձեզի կը վերաբերի — ձեր սիրտը կարծրացած է: Ապա, վար հովանի նայելով, չէ՞ք տեսներ փոքրիկ հողակոյտ մը, տապան մը: Սիրելի հօր կամ մօր մը հանգստավայրն է այն: Տասը տարի առաջ ազօթող մայր մը ունէիք: Ամէն առաւօտ և

իրիկուն իր սենեակին մէջ ծունկի վրայ կու գար ու կ'աղօթէր ձեզի համար: Հիմա վերջացած են անոր աղօթքները և դուք դեռ չէք փրկուած: Ժամանակի նոսանքն ի վար նայելով կը տեսնէք թերևս պզտիկ գերեզման մը որ ձեր դաւելին հանգստավայրը կը ցուցնէ: Թերևս այդ դաւակը բռնեց ձեր ձեռքէն և հարցուց, «Պիտի միանա՞ք ինձի այն երկրին մէջ:» Եւ դուք խոստացաք թէ պիտի միանաք հոն: Երբ այդ պզտիկ փոսին նայեցաք ու լսեցիք պազ ու խոնար հողին անոր մէջ լեցելը, կրկնեցիք այդ խոստումը: Հինգ, տասը, տասնը՝ հինգ տարի առաջ ըրիք այդ խոստումը: Պահեցի՞ք դայն: Չեղմէ ոմանք բլուրէն շատ վար իջած էք և կէջ փութաք դէպ ի դատաստան: Աստուած բանայ այսօր ձեր աչքերը, մինչ ետ կը նայիք ձեր անցեալ կեանքերուն վրայ և առաջ դէպ ապագան: Կարելի է պիտի լրացնէք մարդկային կեանքի համար սահմանուած շրջանը, բայց վախճանը չուտ պիտի հասնի: Մարդոց միջին տարիքը երեսուներեք է: Ընթերցողներէս ոմանք յաւիտեակահաւութիւն փոխադրուած պիտի ըլլան երեսուն օրուան մէջ: Դուք ձեզի հարցուցէք թէ ո՞ւր էք: Ողորմութեան հրաւէրը կը մերժէք արգիօք, Աստուծոյ կոչը կ'արհամարհէք արգիօք: Սիրոյ Աստուածը ցուցնէ ձեզի փրկելիչը, որ ձեր սրտին դուռը կ'սպասէ և կը զարնէ ու կ'ըսէ թէ կ'ուզէ ներս գալ և ձեզ փրկել:

Լոնտոնի մէջ պատմութիւն մը լսեցի ես, որ շատ խոր սպաւորութիւն գործեց իմ վրաս: Յրանտացի ազնուական մը իր վեհապետին յանձնարարական մէկ նամակով Լոնտոն գնաց բժիշկ մը տեսնել: Նախօրէն Գ. կայսրը շատ կը յարգէր ազնուականը: Բժիշկն ալ, փափաքելով զայն բուժել, քննեց մարդը և տեսաւ թէ հոգ մը ունի ան: «Հարատւութիւն կորսնցուցիք: Ի՞նչ բան կը նեղէ ձեզ: Հոգ մը կը ծանրանայ

ձեր մտքին վրայ,» ըսաւ: «Մասնաւոր բան մը չկայ,» պատասխանեց մարդը: «Ես գիտեմ ի՞նչ կ'ըսեմ, ազգական կորսնցուցիք,» հարցուց բժիշկը: «Ոչ, մէկը չկորսնցուցի այս վերջին երեք տարիներուն մէջ:» «Պատուի, համբաւի սեւէ կորուստ կրեցի՞ք ձեր երկրին մէջ:» «Ոչ:» Բժիշկը քանի մը վայրկեան ևս զննելէ և խորհելէ ետև ըսաւ, «Պէտք է գիտնամ թէ ի՞նչ բան կը ճնշէ ձեր մտքին վրայ, ի՞նչ բան կը նեղէ ձեզ:» Ազնուականն ըսաւ, «Հայրս անհաւատ էր, մեծհայրս անհաւատ էր, ևս ալ անհաւատ մեծցայ: Եւ երեք տարիէ ի վեր սա բառերը կու գան միտքս անդադար, 'Յաւիտեակահաւութիւն, ո՞ւր պիտի գանէ զիս արդեօք':» «Ա՛յ,» պատասխանեց բժիշկը, «սխալ բժշկի եկած էք:» «Յոյս չկա՞յ ինձի համար,» գոչեց մարդը: «ցորեկը կը չըջիմ, զիչերը կը սրտկիմ, և չարունակ կը լսեմ— 'Յաւիտեակահաւութիւն, ո՞ւր պիտի անցընեմ դայն արդեօք:» Ըսէք ինձի, յոյս մը կա՞յ ինձի համար:» Բժիշկը պատասխանեց. «Նստէ, խնդրեմ, և հանդարտէ: Գանի մը տարի առաջ անհաւատ էի ես ալ: Չէի հաւատար Աստուծոյ և այն նոյն վիճակին մէջ էի, որու մէջ էք դուք այսօր:» Ապա վար առաւ իր Սուրբ Գիրքը և եռայեայ ԾԳ. գլուխը բանալով կարդաց. «Ան մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ, մեր անօրէնութիւններուն համար ձեծուեցաւ, մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ, և անոր վէրքերով մենք բժշկուեցանք:» Կարդաց զլսուն մինչև վերջը և, երբ աւարտեց, ազնուականն հարցուց. «Կը հաւատա՞ք ասոր, թէ կամաւ թողուց երկիրքը, թէ եկաւ այս երկիրը և չարչարուեցաւ ու մեռաւ, որպէս զի մենք փրկուինք:» «Այո, կը հաւատամ: Այդ է որ զիս անհաւատութենէ հանեց ու խաւարէն լոյսը բերաւ:» Եւ քարոզեց Քրիստոսը և անոր փրկութիւնը, խօսեցաւ երկնից վրայ

և ապա առաջարկեց ծռենկի գալ և միասին աղօթել :
Երբ ևս Լոնտոն էի, նամակ եկած էր այդ աղնուակա-
նէն, որ կը գրէր բժշկին թէ լուծուած է «Յաւիտե-
նականութիւն», և ս'ւր պիտի անցընէ զայն» հարցը :

Սիրելիներ, յաւիտենականութեան այս հարցը թէ
ս'ւր պիտի անցընենք զայն՝ ամէնուս ալ ուշադրութեան
արժանի է : Մենք հոս կարճ օր մը պիտի կենանք :
Մեր կեանքը բարակ թել մ'է լոկ և քիչ ատենէն պիտի
փրթի : Կարելի է այս իմ վերջին քարոզս է : Գիշերը
կրնամ յաւիտենականութեան մէջ ըլլալ : Աստուծոյ
չնորճքով ըսէք թէ երկնից մէջ պիտի անցընէք զայն :
Դժոխքի բոլոր զօրքերը չեն կրնար ձեզի արգելք ըլլալ,
եթէ դուք որոշէք երկինք գալ. վասն զի եթէ Աստուած
կ'ըսէ, «Թող գայ,» ս'վ կրնայ ձեզի դիմադրել : Եթէ
աս պղտիկ ազան ըսէ թէ երկինք պիտի մտնէ, դժոխ-
քի բոլոր զօրքերը չեն կրնար անոր արգելք ըլլալ :
Աստուած օգնէ ձեզի որ ձեր յաւիտենականութիւնը
երկնից մէջ անցընէք, և Աստուած տայ որ ըսէք, «Աս-
տուծոյ չնորճքով ևս Յիսուսը կ'ընդունիմ իբրև իմ
Փրկիչս :»



ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱՐԻԻՆԸ

Ա

Այս անգամ նիւթս է «Պատուական Արիւնը :» Բայց
նախ կ'ուզեմ ձեր ուշադրութիւնն հրաւիրել Ծն. Բ. 16
համարին վրայ. «Եւ Տէր Աստուած պատուիրեց մարդուն՝
բսելով, Պարեգին ամեն ծառէն համարձակ կեր. բայց
բաւույ ու չարի գիտութեան ծառէն մի ուսեր, քանզի
այն օրը որ անկէ ուսես, անուրես պիտի մեռնիս :» Ա-
ստուծոյ պատժի օրէնք չըլլար : Ամէն օրէնք պատիժ մը
ունի իրեն կցուած : Օրէնք մը առանց պատժի՝ ոչինչ
է, արժէք չունի : Եթէ օրէնք մը գնենք գողութեան
դէմ և պատիժ չսպասանանք գողին, չենք կրնար երեկո-
յին տուն երթալ առանց մեր ժամացոյցները գողցնե-
լու : Անկարելի է առանց օրէնքի ապրիլ, և Աստուած
Ազամը պարտէզին մէջ գրաւ օրէնքով մը, որու պա-
տիժ մը կցուած էր : Գիտենք թէ ի'նչպէս անհնազանդ
եղաւ Ազամ ու ինկաւ և մահու պատժի ենթարկուե-
ցաւ : Շատեր կը գայթակղին ստոր համար : Ես ժամա-
նակաւ կը մտածէի թէ ի'նչպէս եղաւ որ Ազամ մահու
պատիժը կրեց՝ օրէնքը կտարելէն ինը հարիւր ինստուն
ինը տարի ետեւ : Բայց երբ աւելի հասկցայ Սբ. Գիր-
քը, տեսայ թէ մահը հոգեկան մահ էր և ոչ ֆիզիքա-
կան : Երբ Աստուած եկաւ Ազամը փնտտել պարտէզին
մէջ, կը կարդանք թէ Ազամ պահուեցաւ : Ամչցաւ իր
անօրէնութեան համար, ձիշտ նման իր այժմու հարիւ-
րաւոր զաւակներուն : Յետոյ Աստուած անոր հետ վար-
ուեցաւ իր չնորճքը ցուցնելով : Ահա Աստուծոյ առաջին
գործը : Շատեր կը խորհին թէ Աստուած շատ խտտի-

վարուեցաւ Ադամի հետ : Սակայն Աստուած անմիջապէս ողորմութիւն ու շնորհք ցուցուց, և այդ շնորհքով աղաւտման ճամբայ մը բացուեցաւ մեղաւորին առջեւ : Կը կարդանք թէ Տէրը «կաշիէ հանդերձ շինեց ու անոնց հազցուց» և այնուհետեւ վտարեց զանոնք պարտէղէն : Նախ շնորհք վայելեցին անոնք, ինչպէս կը տեսնենք 2Գրդ համարէն . «Վոնտեց Ադամը ու Եղեմի պարտէղին արեւելեան կողմէն քերովքէներ ու ամէն կողմ դարձող բոցեղէն սուրը դրաւ, կենաց ճամբան պահելու համար :» Անաւասիկ շնորհք և կառավարութիւն : Եւ այն օրէն սկսեալ մինչեւ այսօր Աստուած նոյն կերպով կը վարուի մեզի հետ : Կրնանք ըսել թէ անոր կառքին երկու անիւներն են շնորհք և կառավարութիւն : Գիտէք թէ աշխարհ ի՛նչ կ'ըլլայ առանց կառավարութեան : Անբնակելի վայր մը : Ադամ կտորեց Աստուածային օրէնքը, և պիտի կրէր պատիժը : Բայց Աստուած ողորմեցաւ անոր : Ողորմեցաւ՝ կենդանի մեռցնելով և անոնց կաշիէն շինուած հանդերձով Ադամայ և Եւայի մերկութիւնը ծածկելով : Կրնամ երեւակայել թէ Ադամ Եւայի դարձաւ ու ըսաւ . «Հակառակ բոլոր մեր յանցանքին, Աստուած կը սիրէ մեզ : Անա հազուեցուց մեզ և ողորմեցաւ մեզի :» Իսկ մենք հոս կը գտնենք առաջին նշոյլը փոխանորդութեան վարդապետութեան — անարդարին սեղ արդարին մահուան, քառութեան և փոխանորդութեան մեծ վարդապետութեան :

Ապա կը գտնենք Կայէնի և Աբէլի պատմութիւնը, և կը կարդանք սապէս . «Ու եղաւ որ ժամանակէ մը ետքը Կայէն երկրի պտուղէն Տէրոջը ընծայ բերաւ : Եւ Հաբէլ ինք ալ իր ոչխարներուն առջինեկներէն ու անոնց պարարանքէն բերաւ, և Տէրը Հաբէլի ու անոր ընծային նայեցաւ, բայց Կայէնի ու անոր ընծային չնայեցաւ . ուստի Կայէն խիստ բարկացաւ ու երե-

սը կախեց :» Կը տեսնենք թէ Կայէն անարիւն պատարագ բերաւ . «Երկրի պտուղէն» — իսկ Աբէլ արիւնալից դառ մը : Անա ողորմութեան առաջտուն իսկ Աստուած իրեն գալու կերպ մը ցուցած էր մարդոց և այդ կերպն էր այն գոր Աբէլ ընտրեց, իսկ Կայէն եկաւ իր կերպով, իր ինքնայատուկ պատարագով : Նմանապէս այսօր կը տեսնենք այրեր ու կիներ որ Աստուծոյ կուգան պատարագով, բայց ոչ այնպէս որպէս Աստուած կ'ուզէ, այլ ինչպէս իրենք կ'ուզեն : Կու գան իրենց դորձերով, իրենց արդարութեամբ, և կ'անդիտանան բոլորովին գառնուկը, կ'անդիտանան արիւնն ամբողջովին : Չեն ուզեր գալ միւս կերպով, այլ կ'ուզեն գալ իրենց կերպով : Կայէն թերեւս խորհեցաւ թէ պատճառ չկայ որ երկրի պտուղը նոյնքան ընդունելի չըլլայ Աստուծոյ որքան արիւնալից գառնուկ մը : Ինք չէր սիրեր արիւնալից գառնուկ, ուստի պտուղ բերաւ : Արդ մենք չենք զիտեր թէ ի՛նչպէս այս երկու սղայոց միջեւ տարբերութիւն յառաջ եկաւ : Երկուքն ալ նոյն կերպով կըթուեցան հարկաւ : Երկուքն ալ նոյն ծնողաց զաւակ էին, և սակայն պատարագի գործին մէջ տարբերութիւն մը կը գտնենք անոնց միջեւ : Մին եկաւ արիւնով, միւսն առանց արիւնի, և առաջինն եղաւ Աստուծոյ ընդունելի :

Անցնինք երկրորդ տնտեսութեան — Ծն . Բ . գլխին — ուր կը գտնենք թէ Նոյ տապանէն ելլելով արիւն կը դնէ իրեն ու իր մեղքերուն միջեւ : «Եւ Նոյ սեղան մը շինեց Տէրոջը, ու ամէն մաքուր անասունէ և ամէն մաքուր թռչունէ առաւ, ու սեղանին վրայ ողջակէզ մատուց :» Աստուած Նոյի պահել տուաւ այդ կենդանիներն ամբողջ ջրհեղեղին ժամանակ, որպէս զի Նոյ կարենար զանոնք պատարագ մատուցանել տապանէն ելլելու պահուն : Նոյ ամէն տեսակէն զոյգ մը առաւ տա-

պանին մէջ և, երբ դուրս եկաւ, իր առաջին զործն եղաւ ողջակէզ մատուցանել: Ինք Աստուծոյ մարդ էր, Աստուծոյ վախով կը քաշէր, ուստի և ողջակէզ մատուց: Կը տեսնենք թէ առաջին անտեսութեան մէջ առաջին բանն արիւն է, երկրորդ անտեսութեան ալ առաջին բանն արիւն է:

Ծն. Ի. գլխուն մէջ կը գտնենք Աբրահամու և իր միամոր որդւոյն Իսահակի պատմութիւնը: Աբրահամ էր մարդ մը որ կը սիրէր զԱստուած և կը վախնար Աստուծոյ մէջ: Աստուած անոր հրամայեց ողջակէզ մատուցանել: Այս գլխուն մէջ կը կարգանք թէ Աբրահամու հրամայեց իր միակ որդին ողջակէզ ընել: Կը կարգանք նաև թէ հետեւեալ առաւօտ ծերունին համեռեց իր էջը և ճամբայ ելաւ: Իր կնոջ բան մը չըսաւ խնդրին վրայ: Եթէ ըսէր, հաւանօրէն ան պիտի համոզէր զինք մնալ ուր որ է: Սակայն ինք բնեց Աստուծոյ ձայնը և կը հնազանդի պատուէրին: Իմացաւ Աստուծոյ փափաքը և կ'երթայ կատարել: Ուստի առաւօտուն կանուխ — չըս պահեց մինչև ժամը տասը կամ տասներկու, այլ առաւօտուն կանուխ — իր հետ կ'ստնէ ծառաներէն երկուքը և իր Իսահակ որդին և կ'սկսի երեքօրեայ ճամբորդութիւն մը: Փայտ առին և կրակ առին իրենց հետ, վասն զի Աստուծոյ զո՞ս պիտի մատուցանէին: Ճամբան տղուն կը նայի և կ'ըսէ, «Տարօրինակ է Աստուծոյ պատուէրը: Ես այս սղան սաստիկ կը սիրեմ: Խեղքս չհասնիր այս պատուէրին, բայց զիտեմ թէ անխալ է, վասն զի բոլոր երկրի Դատաւորը սխալ չզործեր»: Աբրահամի համար բաւական է որ հրամանը երկնից Դատաւորէն է: Առաջին զիշերը կու գայ և տեղ մը կ'իջևաւնին ու Իսահակ կը քնանայ: Բայց չքնանար ծերունին: Տխրութեամբ կը նայի անոր դէմքին ու կ'ըսէ, «Քիչ մը ևս, և գաւակ պիտի չունենամ, այլևս երկրի վրայ

պիտի չտեսնեմ զայն: Սակայն պէտք է հնազանդիմ Աստուծոյ:» Հետեւեալ օր կը շարունակէ իր ճամբան: Կրնայիք տեսնել զինք մինչ արցունքները կը սրբէ այն միակ իր որդւոյն նայելով և իրեն տրուած պատուէրին վրայ խորհելով: Երկրորդ զիշերը կու գայ և վաղը զո՞սին օրը պիտի ըլլայ: Ա՛հ, ի՛նչ զիշեր էր այդ Աբրահամու համար: «Վաղը» կ'ըսէ ան մեծ վշտով, «Ես պիտի զո՞նեմ այս մահսն — իմ միակ որդիս զոր կեանքէս աւելի կը սիրեմ — զոր երկրաւոր սեէ բանէ աւելի կը սիրեմ»: Եւ երրորդ օրը կու գայ և, մինչ կ'երթան, «հեռուէն» կը տեսնեն լեռը: Յայնժամ կ'ըսէ ծառաներուն. «Դուք իշուն հետ հոս մնացէք»: Կ'ստնէ փայտն ու կրակը, և տղուն հետ կը պատրաստուի Մօրիա լեռը ելլել, որմէ կը տեսնուի այն վայրը, ուր քանի մը հարիւր տարի յետոյ Որդին մարդոյ պիտի պատարագուէր: Լեռն ի վեր ելլելու պահուն Իսահակ կ'ըսէ, «Ահա կրակը ու փայտը, հայր, բայց ո՞ւր է ողջակէզը»: Այս կը ցուցնէ թէ որդին սչինչ զիտէր ծրագրին վրայ: Այս հարցումը ս'ըջափ արիւնեց արգեօք խեղճ ծերունին սիրտը: Հայրը կը պատասխանէ. «Աստուած պիտի պատրաստէ ողջակէզը»: Դեռ ժամանակը չէր յայտնելու: Եւ կ'երթան ու կ'երթան մինչև և կու գան Աստուծոյ որոշուած վայրը: Հոն կը շինեն սեղանը և փայտը կը գնեն անոր վրայ: Ամէն բան պատրաստ է և կարծես կը տեսնեմ ծերունին, որ որդւոյն ձեռքէն բռնելով կը տանի զայն քարի մը քով և նստելով կը պատմէ անոր թէ Աստուած ի՛նչպէս կանչեց զինք իր երկրէն, ի՛նչպէս Աստուծոյ հետ հազարգակցութեան մէջ է ինք յիսուն տարիէ ի վեր, և թէ իրեն համար ինչհ'ր ըրած է Աստուած: «Եւ հիմա» կ'ըսէ ան, «գաւակս, երեք զիշեր առաջ անկողնիս մէջ Աստուած ինձի տարօրինակ պատուէր մը տուաւ, որ է

քեզ սղջակէզ մատուցանել: Որդեակ իմ, ես կը սիրեմ քեզ, բայց Աստուած պատուիրեց որ այսպէս ընեմ, և պարտաւոր եմ հնազանդել իրեն: Ուստի ծունկի վրայ գանք և մէկտեղ աղօթենք իրեն:» Իրենց աղերան Աստուծոյ զրկելէ ետեւ Աբրահամ կը գնէ զաւակը սեղանին վրայ և կը համբուրէ վերջին անգամ: Ապա կը վերցնէ գանակը, որպէս զի միտէ որդւոյն սիրտը, և անաշանկարձ կը լսէ ձայն մը, «Աբրահամ, Աբրահամ, խնայէ միակ որդւոյդ:» Բարեկամներ, Որդին մարդոյ փրկելու համար ոչ մէկ ձայն լսուեցաւ Գողգոթայի վրայ: Աստուած սղորմեցաւ Աբրահամու որդւոյն: Ով հայրեր և մայրեր, անգամ մը երեւակայեցէք, ս'բքան պիտի տառապէիք դուք եթէ հրաւիրուէիք զոնկ ձեր միակ զաւակը, և մտածեցէք թէ ինչ կրած է Աստուած իր միածին Որդին տալու համար: Անշուշտ ուրախացաւ Աբրահամ: Աստուած անոր հաւատքին նշաններէն այնքան ախորժեցաւ որ երկնից շնորհքը պարգեւեց անոր, վերջուց ժամանակի վարագոյրը, որպէս զի նայի ապագայի խորերը և տեսնէ Աստուծոյ Որդին պատարագուած՝ աշխարհի մեղքերը վերցնելով: Այդ նոյն լեռան կատարէն կարելի է տեսնել այն վայրը, ուր աշխարհի Փրկիչը մեռաւ:

Արէլ առաջին մարդն էր որ երկինք գնաց արեան միջոցով: Արդեօք ինչպէս երգեց հոն փրկութեան երգը: Ինչպէս անոր շուրջ հաւաքուեցան հրեշտակները ու մտիկ ըրին այդ երգին: Առաջին անգամն էր որ կը լսէին զայն: Բայց անկէ ի վեր 6,000 տարի անցաւ և հիմա քաջական արեամբ փրկուած սուրբերու մեծ երգչախումբ մը կայ: Երկինք գացող առաջին մարդը արեան միջոցով գնաց, վերջին մարդն ալ որ մարդարտեայ այն զոններէն կ'անցնի՝ նոյն միջոցով պիտի երթայ: Կը տեսնենք թէ ոչ միայն Արէլ և Աբրահամ ու

Իսահակ և Յակոբ, այլ ամէնը, շառութեան միջոցով գացին հոն: Ելից ժ.Յ. գլխուն, որ Աստուծոյ Խօսքին մէջ ամենէն կարեւոր գլուխն է, երկրորդ համարին մէջ կը կարգանք. «Այս ամիսը ձեզի ամիսներուն սկիզբը ըլլայ. ձեզի տարւոյն ամիսներուն առաջինն ըլլայ: Ապա չորրորդ համարին մէջ, «Եւ եթէ մէկ տունը մէկ գառնուկի քիչ կու գայ, այն մարդը իր տանը քով եղած զբացիլին հետ հոգիներուն համարանքին համեմատ առնէ. գառնուկին վրայով ամէն մէկուն իր կերածին չափ հաշիւ ընէք:» Նայեցէք, չըսեր, «Եթէ գառնուկը քիչ գայ մէկ տունին,» այլ «Եթէ մէկ տունը մէկ գառնուկին քիչ կու գայ:» Կրնաք բաւական մեծ ընտանիքներ ունենալ, և տուները կրնան անոնց անբաւական ըլլալ, բայց Քրիստոս առատ տեղ ունի: Մենք օրօրոցէն չէ որ կ'սկսինք երկինք երթալ, այլ խաչէն: Հոն կ'սկսի յաւիտենական կեանքը, այսինքն երբ Գողգոթա կու գանք, երբ Քրիստոսի կու գանք ու շնորհք կ'ընդունինք: Երկինք չենք գար երբ կը ծնինք բնական աշխարհի համար, այլ երբ կը ծնինք հոգեւոր աշխարհի համար: Հոգ կ'սկսի մեր հոգեւոր կեանքին թուականը: Ասկէ առաջ մեր կեանքերը գտտարկ են շնորհքի տեսակէտով: Ազամ իր թուականն սկսաւ ջրհեղեղէն, Նոյ, երբ տապանէն ելաւ, սղջակէզէն, Իորայէլի որդիք ալ եղիպտոսի ելքէն: Այսօր իսկ երբ զրիչ կ'առնենք ու 1928 կը գրենք, ուրիշ՝ կ'սկսինք մեր թուականը: Քրիստոսի արիւնէն: Այս գլխուն մէջ կը տեսնենք զոնք պատուէրը: Մորթեցին գառնուկը: Աստուած չըսաւ, «Փառնուկ մը գրէք ձեր զբան առջեւ ու ես ձեզի պիտի խնայեմ,» այլ՝ տուներուն վրայ:

Կարգ մը մարդիկ կ'ըսեն, քարոզեցէք ինչ որ կ'ուզէք բաց ի մահէ, քարոզեցէք Քրիստոսի կեանքը: Կրնաք քարոզել զայդ, բայց ոչ զոք պիտի փրկեմ:

Քրիստոսի համակրանքը, կեանքը չէ որ կը քարոզենք, այլ իր պատարագը: Այդ է որ խաւարէն գուրս կը հանէ մարդը: Կրնամ երեւակայել հպարտ եղիպտացիներ, որոնք այն օրը լսելով մայիւնը գառնուկներուն, որ 200,000է աւելի էին, ըսին, «Ի՛նչ այլանդակ արարողութիւն: Ամէն մարդ գառնուկ մը ունի, բոլորն ալ հօտին լաւագոյններէն, և արեամբ պիտի ծածկեն իրենց տուները:» Այլանդակ գործողութիւն համարեցան զայն, նկարագրի արատ մը: Կրնաք շատ արատներ գտնել ձեր նկարագիրներուն մէջ, բայց չէք կրնար արատ մը գտնել Աստուծոյ Գառնուկին վրայ: Երբ ժամը հասաւ, ամէնն ալ իրենց գառնուկը մորթեցին և ոչ միայն մորթեցին, այլ և դրին տուներու երկու կողմի գրանդէրներուն և վերի սեմին վրայ, որպէս զի Աստուած զիշերը տեանէ զայն իբրև նշան: Այդ արիւնը մահուան տեղ պիտի անցնէր և այն ամէնը որ այդ նշանը չունէին Եղիպտոսի մէջ՝ իրենց անդրանիկները կորուսին կէս գիշերին: Լաց ու կոծ եղաւ ամբողջ Եղիպտոսի մէջ: Բայց մահը չմտեցաւ այն տուներուն ուր այդ նշանը կար: Մահ էր որ մահէ պահեց տուները:

Շատեր կ'ըսեն, «Երանի՛ թէ բարի ըլլայի ևս այն կնոջ պէս որ յիսուն տարիէ ի վեր հիւանդներու կը ծառայէ: Այն ժամանակ երկինք կ'երթայի անշուշտ:» Բարեկամներ, եթէ արիւն ունիք ձեր ետին, այնչափ ապահով էք որչափ կրնայ սեւէ ոք ըլլալ այս երկրի վրայ: Աղքատներու սպասարկելով գոհողութեան կեանք մը վարելուն համար չէ որ այդ կինը Աստուծոյ թաւ գաւորութիւնը պիտի մտնէ: Մեր բարեգործութեան կամ մեր արդարութեան կեանքը չէ որ մեզ երկինք պիտի տանի, այլ՝ քաւութիւնը: Եւ պէտք է սա հարցումն ուղղէ ամէ մարդ իր անձին, «Արիւնին ետեւ սպաստանա՞ծ եմ:» Եթէ չեմ սպաստանած, մահը պի-

տի գայ տակաւ առ տակաւ, և Աստուծո՞ւմէ պիտի գատուինք յաւիտեան: Եթէ չունիք փոխանորդ, պիտի մեռնիք: Մահ վճուած է ամէնուս ալ համար: Ինչո՞ւ: Մեր մեղաց համար: Եթէ չունինք փոխանորդ, յոյս ալ չունինք:

Ոչ միայն պիտի ունենային անոնք նշան, այլ և ուրիշ բան մը պիտի ընէին: Համար Վի մէջ կը կարողանային բան մը պիտի ուտէք զայն. ձեր գօտինեղանք. «Եւ այսպէս պիտի ուտէք զայն. ձեր գօտինեղը մէջքերնից ու ձեր կօշիկները ոտքերնից և ձեր ցուպերը ձեռքերնից ըլլալով, զանիկա արտորոնք ուցուպերը ձեռքերնից ըլլալով, զանիկա արտորոնք ուտէք. Տէրոջը գատիկն է ան:» Շատ մարդիկ կը խորտէն թէ ինչո՞ւ իրենք աւելի հոգեւոր չեն և Տէրոջը ուրախութիւնը իրենց հետ չունին ամէն ժամանակ: Պատճառը սա է որ գառնուկին արիւնը չունին իրենց հետ: Իսրայէլացիք երկար ճամբորդութիւն մը ունէին իրենց առջև, և Տէրը պատուիրեց գառնուկն ուտել: Եթէ Գառնուկով անանինք, զօրութիւն կ'ստանանք նոյն համեմատութեամբ: Բարեկամներ, նայեցէք որ, զեռ ճամբայ չեղած, արեան ետին սպաստանիք, վասն զի երբ տեանէ արիւնը, մահը պիտի անցնի ձեր վրայէն: Արդ ունի՞ք գուք այս նշանը: Մէկը, որու այս հարցումն ըրի օր մը, ըսաւ թէ ինք աղօթք ունի և, երբ երկինք երթայ, պիտի աղօթէ ու պիտի ընդունուի: Ըսի անոր, «Պիտի չընդունուիք այդ կերպով: Հարկ է որ Քրիստոսի արեամբ մաքրուիք: Այդ է միակ զօ է որ Քրիստոսի արեամբ մաքրուիք: Այդ է միակ կարողութիւնը որ կը բանայ երկնից զոնները — միակ կարգախօսը:»

Երբ երկաթուղիով կամ շոգեհատով կը ճամբորդէք, կը հանէք ձեր տոմսակը և պաշտօնեան կը ծակէ զայն: Չնայիր թէ գուք ո՞վ էք կամ ի՛նչ մարդ էք: Բոլոր ուղեւորն է տոմսակը: Նմանապէս բոլորը զոր Աստուած կ'ուղէ՝ մեր փրկութեան նշանն է: Մեր գործերէն,

մեր արդարութենէն կամ մեր կեանքերէն կախեալ չէ
այն, այլ արեան ետին մեր ապատանելէն կամ չա-
պատանելէն: Այս է հարցը: Գետեմի այն երկրին մէջ
կարեւորութիւն չունէր թէ ազան վեց ամառան կամ
վեց տարեկան էր, եթէ արեան ետին կը գտնուէր:
Չանոնք փրկողը արիւնն էր, ոչ թէ իրենց բարոյա-
կան նկարագիրը կամ իրենց կապակցութիւնները: Քա-
ւութիւնն է որ կը փրկէ, և այս է բովանդակ Աստ-
ուածաչունչին ուսուցածը:

Ուրիշ համար մը կայ որու կ'ուզեմ ձեր ուշադրու-
թիւնն հրաւիրել. «Սոյք մորթես, ու անոր արիւնը
առնես, ու սեղանին վրայ շուրջանակի սրսկես» (Եւ-
րթ., 16): Ահա ճշր տեսնենք թէ Ահարոն քահանայապետը
չէր կրնար Աստուծոյ ներկայանալ լոկ իր ազօթքներով:
Պարտաւոր էր սեղանին վրայ սրսկել արիւնը: Ժամա-
նակաւ եւ կարեւորութիւն չէի տար փոխանորդութեան
և արեան, և իմ ազօթքներս հազիւ գլխուս չափ բարձր
կ'ելլէին: Սակայն երբ Աստուծոյ եկայ Յիսուս Քրիս-
տոսով — արեան ձամբով — փոխուեցաւ գործը: Չտե-
սայ երբեք մէկը որ իրապէս Աստուծոյ եկաւ տարբեր
ձամբով: Այն քահանայապետն ալ այս կերպով կու գար:

Դարձեալ, կը կարդանք Լ. 10ի մէջ. «Եւ Ահարոն
տարին անգամ մը անոր եղջիւրներուն վրայ քաւութի-
ւնն պիտի ընէ, անիկա քաւութիւններուն մեղքի
պատարագին արիւնով անոր վրայ քաւութիւն պիտի
ընէ տարին անգամ մը ձեր ազգերուն մէջ, ասիկա ա-
մենասուրբ է Տէրովը:» Ահա քաւութիւնը միակ բանն
է որ կը միացնէ մեզաւորն ու զԱստուած, միակ բա-
նը որ իրարու կը բերէ զԱստուած ու մեղաւորը: Եթէ
ժամանակս ներէր, պիտի ուզէի ձեզի յիշել Հին կտա-
կարանի բոլոր համարները որ քաւութեան կը վերա-
բերին, բայց շատ են անոնք: Դառնանք Ղ. և Բ. գլը-

խուն: Այս գիրքը ամէնէն յարգին է, վասն զի ամ-
բողջովին Աստուծոյ երկրպագութեան վրայ կը խօսի:
Դեռ կը յիշեմ թէ ի'նչպէս կը մտածէի ես երբ սասկիսի
համար մը կարդայի. «Եւ մորթեց զանիկա, ու Մովսէս
անոր արիւնէն առաւ, և Ահարոնի աջ ականջին բլթա-
կին վրայ, և անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ, և
անոր աջ ոտքին մեծ մատին վրայ դրաւ» (համար 23):
«Այս ի'նչ կը նշանակէ,» կ'ըսէի: «Ահարոնի աջ ա-
կանջին բլթակին վրայ: Ինչո՞ւ:» Կարծեմ հիմա քիչ
մը լոյս առած եմ խնդրին վրայ: «Ականջին վրայ
արիւնն:» Այս, որպէս զի մարդս կարող ըլլայ լսել
Աստուծոյ ձայնը: Նմանապէս քաւութիւնն ընդունողը
կրնայ ուղիղ լսել խօսքը: «Ձեռքին վրայ արիւնն»
Այս, որպէս զի Աստուծոյ համար գործողը կարենայ
ուղիղ գործել: Երբ մարդն այս գիրքին մէջ է, կրնայ
Աստուծոյ երթալ և ընդունուիլ: Ոտքին վրայ արիւնն:
Որպէս զի մարդ կարենայ Աստուծոյ հետ քալել: Գի-
տէք թէ երբ Աստուած Ազամի եկաւ, Ազամ պահուե-
ցաւ: Չունէր արիւնը և չէր կրնար Աստուծոյ հետ քա-
լել: Աստուած զանոնք արեան ետին դրաւ, և ինք ա-
նոնց մէջէն քալեց: Երբ կարմիր Ծով եկան, անեղ
ջուրերը բացուեցան և Աստուած անոնց հետ քալեց:
Անսպաստին մէջ ջուր ուղեցին, և գաւազան մը գոր-
կաւ ժայռին, և բերեղեայ ջուր բխեցաւ: Ինչո՞ւ:
Վասն զի քաւութիւն ստացած էին:

Շատեր կ'ըսեն թէ շատ խորհրդաւոր է այս և չենք
ասկնար թէ ինչո՞ւ Աստուած արիւն կ'ուզէ քաւութե-
ան համար: Մարդ մը ինձի ըսաւ, «Ես կը զգուխմ
ձեր կրօնէն, կ'ատեմ ձեր Աստուածը:» «Ինչո՞ւ,» հար-
ցուցի: «Աստուած մը, որ արիւն կը պահանջէ, զգուխի
է ինձի,» պատասխանեց: Արդ, Աստուած անարդար
Աստուած չէ: Ինք արիւն չպահանջեր առանց պատճա-

որ: Ինք կ'ըսէ իր խօսքին մէջ թէ «մարմինն կենդանութիւնը արիւնին մէջ է:» Առէք ինծմէ իմ արիւնըս և ևս մեռեալ մարդ մը կ'ըլլամ: Կեանքը տուած է, օրէնքը կտորուած է, և պատիժը պիտի կրինք: Իր արիւնը զոր մեզի կու տայ՝ կեանք է, մեր մարմինն կենդանութիւնն է: «Արիւն» բառը երեք անգամ կը գտնենք համար 23ի և 24ի մէջ, և պատճառը սա է որ կեանք է այն: Դուք ու ևս կեանք կորուսինք անկումին պատճառով, և հիմա գտնելու ենք զայն զոր կորուսինք, և անա մեզի կը մատուցուի Քրիստոսի քառութեամբ: Շատ անգամ խորհած եմ թէ աւելի նախամեծար է եղեմէ դուրս գտնուիլ և արիւնն ունենալ քան եղեմի մէջ ըլլալ առանց անոր: Բայց ոմանք չեն ըմբռներ թէ ինչո՞ւ Աստուած թոյլ տուաւ որ իյնայ Ագամ: Չին կրնար ամենափոքր պատճառ մը նշմարել: Լաւագոյն պատասխանը որ երեք տրուած է՝ սա է. «Շատ աւելի զարմանալի է որ Աստուած իր Որդին տուաւ, որպէս զի անոր պատիժը կրէ:» Աստուծոյ փառք տանք որ ապաւէն մը, փոխանորդ մը, ունինք մեզքին համար որու տակ կը հեծենք:

Բանանք Ես. ԾԳ. գլուխը: Շատեր կ'ըսեն, «Ես Հին Կտակարանին չեմ հաւատար, նորին կը հաւատամ»: Բարեկամներս, երկուքն իրարմէ անբաժան են: Կարմիր թիւ մը կ'անցնի երկուքին ալ մէջէն և զանոնք իրար կը կապէ: Մենք ոչխարներու պէս մոլորեցանք, «բայց ան մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ, մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ, մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ, և անոր վէրքերով մենք բժշկուեցանք:» Միրեկներ, Եսայեայ այս գլխուն մէջ կը տեսնենք թէ Քրիստոսի մանր և փոխանորդութիւնը մեզի համար՝ տեղի ունենալէն 700 տարի առաջ մարգարէացուած են: Ուրեմն

ընդունինք զինք: Ստորին ապերախտութիւն կը թուի մեր կեանքին մէջ ամէն ժամ զԱստուած չփառաւորել այսպիսի Փրկիչ մը տուած ըլլալուն համար: Երիտասարդ կայ որ ազնիւ բան կը համարի ծագրել զայս: Ես կը կարծեմ թէ ամենազատ ապերախտութիւն է: Այս քառութիւնը յաւիտեանական կեանքիս միակ յոյան է: Փոխանորդութեան վարդապետութիւնն հանեցէք Սբ. Գիորգէս, և ևս այլեւս տուն չեմ տանիր զայն: Աստուծոյ փառք տանք որ այնչափ սիրեց մեզ որ իր միածին Որդին տուաւ, որպէս զի փրկուինք:

Քանի մը տարի առաջ հետեւալը կարգացի Նիւ Եորքցի ընտանիքի մը վրայ: Ոսկի փնտռելու տենդին ժամանակ երիտասարդ մը կողմազական գնաց՝ իր ետին թողով կին մը և փոքրիկ մանչ մը: Յաջողելուն պէս դրամ պիտի զրկէր: Երկար ժամանակ անցաւ: Վերջապէս կնոջ նամակ մը հասաւ դրամով և ճամբայ կլլելու հրաւերով: Կինը կողմազականի լաւագոյն չափնաւերէն միով ճամբայ ելաւ ի մօտոյ իր ամուսնին հետ միանալու յուսով և ուրախութեամբ: Քանի մը օր յետոյ ազազակ մը թնդաց չափնաւուն մէջ: «Կրակ կայ, կրակ կայ:» Ջրհանները և դոյլերը գործի սկսան, բայց կրակը չյաղթուեցաւ: Վառօցի մթերանոց մը կար նաւուն մէջ: Նաւապետն հրամայեց խօսյն վար առնել բոլոր մակոյկները: Գիտէր թէ, երբ կրակը վառօղին հասնի, ամէնն ալ պիտի կորուսին: Նաւորդները խուժեցին մակոյկները, և մայր ու որդեակ մնացին նաւուն մէջ: Մինչ վերջին մակոյկը կը բաժնուէր, կինն ազազեց որ ինք ալ մտնէ: Մարդաց մեծ մասը պնդեցին թէ տեղ չկայ և ուղեցին բացուիլ: Սակայն մարդ մը բարեխօսեց անոր համար և ըսին թէ կրնան միայն մէկ հողի առնել և ոչ աւելի: Ի՞նչ ըրաւ մայրը: Ի՞նք մտաւ ու որդին ձգեց: Ոչ: Դրաւ որդին մակոյկը և

պատուիրեց, եթէ ողջ մնայ ու տեսնէ իր հայրը, ըսել անոր, «Ես մեռայ՝ քեզ աղատելու համար:» Մակոյկն հեռացաւ շոգենաւէն, հոն թողլով մայրը: Հրդեհը շարունակեց և վերջապէս պայթիւն մը լուսեցաւ և ամէն ինչ կորաւ ուղիւստոսին մէջ: Եթէ այդ որդին հոս բլլար հիմա և խնդար իր մօր զոնորութեան վրայ, երբ դուք զայն յիշէիք, պիտի ըսէիք անշուշտ, «Այդ թշուառ ապերախան անարժան է ապրելու:» Եւ անա այսպէս էք դուք: Յիտուս իր կեանքը տուաւ ձեզի համար: Արհամարհանքով պիտի խօսիք իր վրայ: Թեթևօրէ՞ն պիտի խօսիք այն արեան վրայ զոր թափեց ի Գողգոթա: Ոչ, ոչ: Այլ մանաւանդ գոհանանք Աստուծոյ որ այսպիսի Փրկիչ մը ունինք: Եւ ապրինք Անոր համար որ մեր տեղը մեռաւ:



ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱՐԻԻՆԸ

Բ

Տեսորիս նախորդ մասին մէջ Պատուական Արեան վրայ խօսեցայ, և անոր վերաբերեալ քանի մը համարներ յիշեցի Հին Կտակարանէն: Հիմա կ'ուզեմ Նոր Կտակարանէն քանի մը համարներ ի նկատ առնել նոյն նիւթին վերաբերեալ: Եւրոպայէ Ամերիկա վերադարձիս նամակ մը ստացայ տիկինէ մը: Կ'ըսէր թէ մեծ փափաքով կ'սպասէր իմ գալուս, և այդ փափաքը չպակսեցաւ բնաւ, երբ լսեց իմ քարոզներու մինչեւ այն օրը երբ սկսայ արեան վրայ խօսիլ: Այդ ժամանակ ամէն յոյս կորսնցուց իմ աշխատութեանս օգտակարութեան մասին: Նամակը կը վերջանար սապէս. «Ո՞ւր սորվեցուց Յիսուս վտանգաւոր ու բարբարոսական սա վարդապետութիւնը թէ մարդիկ պիտի փրկուէին իր արեան հեղու մով: Երբեք, երբեք չսորվեցուց Յիտուս հրէշային այդ զաղափարը:» Բանանք Մարկ. Ժ. 24 համարը, ուր կը կարդանք. «Ըսաւ անոնց, Ասիկա է իմ արիւնս նոր ուխտի, որ չատերու համար կը թափուի.» նաև Մատ. ԻԶ. 28. «Ասիկա է իմ արիւնս նոր ուխտի, որ չատերու համար կը թափուի մեղքերու թողութեան համար:» Ծառ համարներ կան, բայց անհրաժեշտ չէ ուրիշներ յիշել: Եթէ Քրիստոս չսորվեցուց զայն, նաև ստաքեալները — եթէ Քրիստոս չքարոզեց զայն, ես իմ Աբ. Գիրքս սխալ կարգացած եմ այսքան տարիներ, Աբ. Գրոց բանալին չունիմ, այն ինձի համար կնքուած դերք է, և եթէ չքարոզեմ զայն ու լքեմ, քարոզելու

ոչինչ կ'ուսնենամ: Սբ. Գիրքէս հանեցէք արեան օրհնեալ վարդապետութիւնը, և ահա կը կորսուի իմ գրամագլուխս և պէտք է որ ուրիշ գործով զբաղիմ:

Օր մը երիտասարդ քարոզիչ մը եկաւ ու ըստինձի. «Սբ. Մուսի, կա՛մ դուն ուղիղ ես և ես բոլորովին սխալ եմ, կա՛մ ես ուղիղ եմ և դուն բոլորովին սխալ ես:» «Է՛հ,» պատասխանեցի, «ստաւեղութիւնը ձեր կողմն է: Դուք իմ քարոզութիւնս լսած էք և գիտէք ի՛նչ են իմ վարդապետութիւններս, մինչդեռ ես լսած չեմ ձեզ և չեմ գիտեր թէ ի՛նչ կը քարոզէք:» «Լաւ, իմ քարոզութեանս և քու քարոզութեանդ տարբերութիւնը սա է որ դուք կ'ըսէք թէ փրկութիւն կ'ստացուի Քրիստոսի մահուամբ, իսկ ես կ'ըսեմ թէ կ'ստացուի Քրիստոսի կեանքով:» «Ուրեմն ի՛նչ կ'ըսէք մահուան վերաբերեալ համարներուն,» ըսի և սկսայ յիշել «Արիւն չթափուած՝ թողութիւն չըլլար,» «Որ մեր մեղքերը իր մարմնովը խաչափայտին վրայ վերցուց,» և հարցուցի թէ ի՛նչ կ'ընէ ասանք: «Բնաւ չեմ քարոզեր ուսոնց վրայ,» պատասխանեց: Ուրիշ համարներ ալ յիշեցի և նոյն պատասխանը տուաւ: «Ուրեմն ի՛նչ կը քարոզէք,» հարցուցի վերջապէս: «Բարոյական քարոզներ,» պատասխանեց: Հարցուցի, «Իրտէ՞ք ուէ մէկը որ այդպիսի քարոզով փրկուած ըլլայ — ուէ մէկը դարձի բերի՞ք առոնց միջոցով:» «Այդպիսի դարձ փնտռած չունիմ երբեք, ես կ'ուզեմ մարդիկ մշակութեան կամ կրթութեան միջոցով երկինք տանիլ:» Ես ալ պատասխանեցի. «Եթէ ես այդ համարները չքարոզեմ և միայն մշակութիւն քարոզեմ, ամբողջ բանը կեղծիք կ'ըլլայ:» Ինք ալ ըստ. թէ «կեղծիք է իրեն համար:» Արդարև այն բոլորին որ մարդ բաժնուի արեան այս վարդապետութեանէն, կրօնը կեղծիք կ'ըլլայ, վասն զի այս գիրքին ամբողջ վարդապետութիւնը սա

է թէ Քրիստոս աշխարհ եկաւ և մեր մեղաց համար մեռաւ:

Բանանք Յովհ. ԺԹ. 34 համարը. «Ձինուորնեւրէն մէկը գեղարդով անոր կողը խոցեց, և շուտ մը արիւն ու ջուր ելաւ:» Արիւն ու ջուր ելաւ: Տարիներ առաջ մարդարէացուեցաւ. թէ աղբիւր մը պիտի բացուէր մեղք և անմաքութիւն լուացող: Կ'երևի թէ այդ աղբիւրը բացուեցաւ հոս զինուորին գեղարդով և արիւն ու ջուր ելաւ: Երբ Հոմայեցի զինուորը սըրբարիւն ու ջուր ելաւ և գեղարդին դպաւ, ու շատ բնց արիւնը, ջուր ելաւ և գեղարդին դպաւ, ու շատ չանցած՝ Քրիստոս նուածեց Հոմայեական այդ կառավարութիւնը: Հիմա աթոռ և պատուանդան է միանգամայն, և ընդհուպ երկրի պիտի տիրէ մէկ բեւեռէն մինչև միւսը: Այս երկիրը Քրիստոսի օրհնեալ արեամբ փրկուեցաւ: Պետրոս առաքեալ կ'ըսէ իր Առաջին Թուղթին Ա. 18 համարին մէջ, «Իրոնալով որ դուք ոչ թէ ապականացու արծաթով կամ ոսկիով փրկուեցաք ձեր հայրերէն տւանդուած ունայն ճամբաներէն, հասցա Քրիստոսի պատուական արիւնով, որպէս թէ ամբիծ ու անարատ գառի մը:» Դուք ապականացու ոսկիով կամ արծաթով չփրկուեցաք, այլ Գառին պատուական արեամբ — Քրիստոսի պատուական արեամբ — որպէս թէ ամբիծ ու անարատ գառի մը: Եթէ արծաթ ու ոսկի կարենային փրկել մեզ, ամենապիւրին բանը պիտի ըլլար երկրիս ծաւալէն տասն հազար անգամ մեծ ոսկեկոյտ մը գիղել: Երկնից մէջ ամէնէն խեղճ բանը ոսկի է: Բայց ոսկին կարող չէ փրկել: Ինչպէս ըսի արդէն, օրէնքը կոտորուած էր և մահուան պատիժը մեր վրայ եկած, ուստի կեանք հարկ էր մեզ վերջ մեր վրայ եկած, ուստի կեանք հարկ էր մեզ վերջ մեր կեցու համար: Հիմա կ'ըսէ թէ պիտի փրկուինք: Բարեկամներ, ինձի համար փրկութիւնը Աստուծոյ Խօսքին բեկաններ, ինձի համար փրկութիւնը Աստուծոյ Խօսքին ամէնէն պատուական գանձերէն մին է — խորհիլ թէ

Քրիստոս իր արեամբ դնած է զիս: Այլևս ես իմս չեմ, իրն եմ: Ինք իր կեանքը փրկանք տուած է ինձի համար:

Օր մը բարեկամներէս մին տղու մը պատահեցաւ որ ձեռքը ճնճղուկ մը ունէր: Ճնճղուկն անարեկ եղած էր և կարծես ազատութեան կը տենչար: Բայց տղան ամուր կը բռնէր զայն: Բարեկամս կ'ըսէ, «Ձեռքդ բաց և թող սուր թռչունը:» «Ոչ,» կը պատասխանէ տղան, «ամբողջ ժամ մը աշխատեցայ ես բռնելու համար, պիտի պահեմ:» Բարեկամս կը բանայ քսակը և կը հարցնէ տղուն թէ կը ծախէ՞: Մակարկութիւն կ'ըլլայ և ճնճղուկը կը յանձնուի բարեկամիս: Կը բանայ ան իր ձեռքը, բայց կարծես թռչունը չհասկընար իր ազատութիւնը: Քիչ յետոյ կը թռչի ձուռողելով, որպէս թէ «փրկեցիր զիս» ըսելով: Նմանապէս Քրիստոս երկինքէն եկաւ և կ'ուզէ փրկել մեզ ու ազատութիւն տալ: Ինք չեկաւ մեզ Սատանայէն ազատել, այլ մեր մեզաց պատիժէն:

Արեան վրայ ուրիշ խորհուրդ մը ևս: Արիւնը մեզ ամէնս մէկ կ'ընէ: Արիւնը մեզ մէկ ընսանիք, հաստքի մէկ ընսանիք կ'ընէ: Այլևս այլ ցեղերը, ազգերը կը միացնէ, վէճի և անհամաձայնութեան սերմններով իրարմէ զատուածները կը միաբանէ: Գործ. Ժէ. 26ի մէջ կը կարդանք. «Եւրոս մարդոց ազգերը մէկ արիւնէ ըրաւ, որպէս զի բոլոր երկրի երեսին վրայ բնակին. և որչաւած ժամանակներ հաստատեց, ուսնոնց բնակութեան սահմանները՝ զԱստուած փնտռելու:» Ահա ինչ որ Քրիստոսի արիւնը կ'ընէ: Մեզ կը միացնէ: Կրնամ ես ճանչնալ մարդ մը որ արեամբ փրկուած է: Ամէնը նոյն լեզուն կը խօսին: Պէտք չունիմ զայն տասը վայրկեան տեսնելու՝ հասկնալու համար թէ փրկուած է թէ ոչ: Անոնք միայն մէկ լեզու ունին և

երբ խօսին, կրնաք ըսել թէ արիւնէն դո՛ւրս են թէ անով պատասպարուած են: Արիւնը երկու ձայն ունի — մին փրկութեան համար, մին ալ դատասպարութեան համար: Արիւնն հիմա կ'աղաղակէ իմ փրկութեանս կամ դատասպարութեանս համար: Եթէ արեան ետին ապաստանած ենք, մեր փրկութեան համար կ'աղաղակէ, վասն զի կը տեսնենք առ Գաղատացիս Թուղթէն թէ «մեր խաղաղութեան համար կ'աղաղակէ:»

Գարձեալ, ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ Մատ. ԻԶ. 28 համարին, ուր Քրիստոս կը խօսի իր արեան վրայ՝ ըսելով, «Ասիկա է իմ արիւնս նոր ուխտի, որ շատերու համար կը թափուի մեղքերու թողութեան համար:» Այս արիւնը թափուեցաւ «մեղքերու թողութեան համար:» Ապա Եբբ. Թ. 22ի մէջ կ'ըսուի, «Արիւն չթափուած թողութիւն չըլլար:» Մարդիկ չեն հասկնար թէ այս է Աստուծոյ փրկագործութեան ծրագիրը: Անցեալ օր մարդ մը ըսաւ ինձի, «Աստուած մեզ փրկելու ծրագիր մը ունի անշուշտ:» Հարկաւ ունի: Աստուծոյ ծրագրով պիտի փրկուիք: Աէրը մղեց զԱստուած իր Որդին զրկել որպէս զի մեզ փրկէ և իր արիւնը թափէ: Այս էր ծրագիրը: Եւ առանց արեան ի՞նչ յոյս ունիք: Ձեր մանկութենէն, օրօրոցէն, հաշուելով չկայ մեզք մը որ ներուի առանց արեան: Միտ դնենք Աստուծոյ խօսքին. «Արիւն չթափուած թողութիւն չըլլար:» Կը լսէ՞ք, առանց արեան հեղման չկայ թողութիւն: Ձեմ հասկնար թէ ինչո՞ւ չհասկցուիր այս: Քրիստոս ասոր համար մեռաւ, ասոր համար մեռաւ. Գողգոթայի վրայ: Եթէ մարդ մը արհամարհէ այդ արիւնը, ի՞նչ յոյս կ'ունենայ: Ի՞նչպէս պիտի մտնէ Աստուծոյ թագաւորութիւնը: Ձէք կրնար սուրբերութեան երգին միանալ, եթէ այդ կերպով չերթաք երկինք: Ձէք կրնար երգել փրկութեան երգը: Եթէ երթաք,

կարծեմ անկիւն մը պիտի քաշուիք ձեր քնարով և պիտի երգէք, «Ես զիս փրկեցի, ևս զիս փրկեցի»:

Ապա Երր. Ժ. 28, 29 համարներուն մէջ կը կարդանք. «Մէկը եթէ Մովսէսի օրէնքը անարգէր, առանց ողորմութեան երկու կամ երեք վիճաներով կը մեռնէր: Ալ ո՛րչափ սաստիկ պատժի արժանի պիտի սեպուի կը կարծէք անիկա, որ Աստուծոյ Որդին ոտքի տակ առաւ, և ուխտին արխնը անմաքուր սեպկց, որով ինք սրբուեցաւ, և շնորհաց Հոգին նախատեց»: Յարեկամներ, ի՞նչ յոյս կայ, եթէ մարդ ոտքի տակ առնէ Քրիստոսի արխնը և ըսէ, «Ես չեմ ուզեր սեւ գործ ունենալ այդ արեան հետ»: Ի՞նչ յոյս կայ, կ'ըսեմ կատարեալ անկեղծութեամբ: Երկինք երթալու միակ միջոցն այս է, ուրիշ չկայ: Դառնանք նոյն գլխուն 12րդ համարին. «Յայց ասիկա մէկ զո՞ մատուցանելով մեղքերու համար» — զիտեցէք մէկ զո՞ մատուցանելով լուծեց մեղաց հարցը — «մշտնջենաւորապէս Աստուծոյ աջ կողմը նստաւ»: Քահանայակերտները ընաւ չէին կրնար նստիլ: Անոնց գործը չէր լինար: Սակայն մեր Քահանայակերտ ջնջեց մեղքը մէկ զոհով և ապա Աստուծոյ քով ելաւ: Դարձեալ, այս նոյն գլխուն մէջ կը կարդանք, «Ուրեմն, եղբայրներ, համարձակութիւն ունենալով սուրբ տեղը մտնելու Յիսուսի արխնով, այն նոր ու կենդանի ձամբով զոր բացաւ մեզի վարագուրին մէջէն, որ է իր մարմինը, և մեծ քահանայ մը ունենալով Աստուծոյ տան վրայ, մօտենանք ճշմարիտ սրտով, լեցուն հաւատքով, սիրտերնիս չար խիզճէ մաքրուած, ու մարմիննիս մաքուր ջուրով լուացուած: Անխախտ պահեմք յոյսին դաւանութիւնը, վասն զի հաւատարիմ է ան որ խոտացաւ»: Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ մանաւանդ 20րդ համարի «նոր ու կենդանի ձամբով» բառերուն: Քրիստոս նոր ու կենդանի ձամ-

բայ մը բացած է: Ձեռք կրնար հիմա երկինք երթալ ըուն մեր գործերով: Ինք «նոր ու կենդանի ձամբայ մը» բացած է: Այլևս պէտք չունինք քահանայակերտ մը որ տարին անգամ մը երթայ և աղօթէ Աստուծոյ: Փառք Աստուծոյ, ամէնս ալ թագաւոր ու քահանայ ենք: Կրնանք ուղղակի Հօրը գիմել Տէր Յիսուս Քրիստոսի անունով: Երբ Քրիստոս մեռաւ, այն տաճարը վերէն վար ձեղքուեցաւ — ոչ թէ վարէն վեր — և Ազամայ ամէն խեղճ որդի կրնայ ուղղակի ներս մտնել ու երկըրպագել — ուղղակի ներկայանալ Աստուծոյ, եթէ միայն գայ արեան ձամբով: Այո, փառք Աստուծոյ, նոր ու կենդանի ձամբայ մը բացաւ, որով կրնանք իրեն երթալ: Այս նոր ու կենդանի ձամբուն համար փառք տանք Աստուծոյ: Եպիսկոպոսի, Պապի, քահանայի կամ մարդարէի պէտք չունինք այլևս, Աստուծոյ երթալու համար: Ամէն մարդ կրնայ թագաւոր ու քահանայ ըլլալ, և կրնանք այս կենդանի ձամբով անոր ներկայանալ և խնդրել որ վերցնէ մեր մեղքերը:

Արեան վրայ շատ բան կայ առ Եբրայեցիս Թուղթին մէջ, բայց ժամանակն արագ կ'անցնի և ես աճապարելու եմ: Քարոզածներուս մէջ չեմ գիտեր վարդապետութիւն մը որու վրայ աւելի խօսուած ըլլայ քան արեան վարդապետութեան վրայ: Այն վայրկեանին որ Աստանան յաջողի մէկուն մերժել աալ արեան այս վարդապետութիւնը, կը շահի ամբողջ իր ուղածը: Կրնայ մերձայն մերժել ամէնէն վտանգաւոր բանն է: Կրնայ մէջը փայլուն քարոզիչ ըլլալ, փայլուն իմացականութիւն կը ունենալ, խուսճամբով ունկնդիրներ ունենալ: Սակայն, եթէ զայս մերժէ, ոչ ոք պիտի օգտուի անոր պաշտօնէութենէն, ոչ ոք պիտի ծնի Աստուծոյ թագաւորութեան մէջ: Եթէ մէկը մերժէ այս արխնը, աւելի լաւ է որ երթայ փողոցները թափառի սուլելով,

և այդ կերպով նորադարձ շահիլ ջանայ: Նշանաւոր գովէճի մը պատկառելի նախագահը սովոր էր սա խրատը տալ՝ քարոզել սկսող ամէն աշակերտի, «Պարոն, պաշտօնէութեանդ մէջ մեծ կարեւորութիւն տուր արեան» Եւ շատ ձամբորդած եմ, բայց երբեք չտեսայ արեան և քաւութեան վրայ ծանրացող քարոզիչ մը որ չօրհնուեցաւ հոգիներ ծնուցանելով լոյսին: Սակայն ով որ զանց կ'ընէ զայն, անոր եկեղեցին իր մեկնումով կը քայքայի աւագէ չուանի նման և անոր քարոզութիւնն ապարդիւն կ'ըլլայ: Եթէ տեսնէք քարոզիչ մը որ կը ծածկէ կամ կը թաղէ արեան վարդապետութիւնը, մի նստիք անոր առջև. փախէք, ի՛նչ յարանուանութեանէ ալ ըլլայ: Փախէք Սողոմէ փախողներուն նման: Փախէք ի՛նչ կերպով որ կրնաք: Ծեփած գերեզման է ան: Արեամբ միայն կրնանք երկինք երթալ, այսինքն չենք կրնար երկինք երթալ, եթէ մեր հանդերձները չլուացուին Գառին արեամբ: Եթէ կ'ուզենք յաղթող ըլլալ, պէտք է նախ լուացուինք այն արեամբ: Մէկը որ չէ զգացած թէ արիւնն ի՛նչ ըրած է իրեն համար, փրկութեան նշանը չունի: Կ'ըսուի թէ Յուլիանոս Ուրացող կուեկու պահուն նետահար եղաւ իր կողէն: Դուրս քաշեց նետը, և ափ մը արիւն անելով օղին մէջ նետեց ու ազաղակեց, «Ով Գալիլեացի, Գալիլեացի, յաղթեցի՛ր ինծի»: Այո, Գալիլեացին պիտէ յաղթէ և միտք պահելու էք թէ, եթէ չընդունիք արիւնը և չթողուք որ ձեզ մաքրէ, ժայռը ձեր վրայ պիտի իյնայ, վասն զի երկինք վճռած է որ ամէն ծունկ պիտի խոնարհի երկնից կամքին առջև:

Ծերունի պաշտօնեայ մը յիտուն տարի հաւատարմաբար աւետարան քարոզեց: Երբ իր վախճանին հասաւ, ուղեց որ իր Սբ. Գիրքը բերուի: Աչքերն ազօտացած էին, խնդրեց բանալ Ա. Յովհ. Ա. 7 համարը: Երբ

բացուեցաւ, Ծերունին դրաւ իր զողջօղուն մատը այդ համարին վրայ որ կ'ըսէ, «Ապա եթէ լոյսի մէջ քաշենք, ինչպէս անիկա լոյսի մէջ է, իրարու հետ հագորգութիւն կ'ունենանք, ու անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ» և ըսաւ, «Ես այս յուսով կը մեռնիմ»: Այս է միակ կերպը որով մեր մեղքերը կը լուացուին: Անգամ մը երկնից մէջ «Ասոնք ո՞վ են» հարցուեցաւ, երբ մեծ բազմութիւն հաւաքուած էր: Եւ սա պատասխանը տրուեցաւ. «Ասոնք են մեծ նեղութեան եկողները, որոնք իրենց հանդերձները լուացին, ու զանոնք Գառուկին արիւնովը ձերմկցուցին»:»

Հիմա ես կը հարցնեմ ընթերցողներուս, ի՛նչ պիտի ընէք այդ արիւնը: Կա՞մ պիտի ընդունիք, կա՞մ պիտի մերժէք: Տիկին մը իր ծառային պատուիրեց գաւ մը եփել: Ամէն բացատրութիւն տուաւ թէ ի՛նչպէս պիտի պատրաստէր, բայց բա՛ն մը չըսաւ արեան նկատմամբ: Ուստի ծառան անոր գնաց և հարցուց, «Ի՛նչ պիտի ընէք գառին արիւնը»: Տիկինը ժամանակէ մը ի վեր կը մտատանջուէր իր հոգեւոր վիճակին համար, և այս հարցումը նետի պէս խոցեց անոր հոգին: Գնաց իր սենեակը, բայց չհանդատացաւ: Հարցումը կը թնդար ականջներուն մէջ և չլուացած՝ ծունկի վրայ եկաւ ու Գառուկին արեան քաւութիւնը խնդրեց:

Աւետարանի ամէնէն վսեմ ճշմարտութիւնը սա է թէ միակ բանը զոր հոս թողուց Յիսուս՝ իր արիւնն է: Իր մարմինն ու ոսկրները տարաւ, բայց իր արիւնը թողուց Գողգոթայի վրայ: Մեր մահուան ժամուն, այդ արիւնը մեզի համար աւելի պիտի արժէ քան երկրի բոլոր թագաւորութիւնները: Կրնա՞ք կրնա՞կ դարձնել անոր և արձամարհել զայն: Պատերազմի ժամանակ զինուորներու մէջ աշխատող հոգեւոր պաշտօնեայ մը օր մը

լսեց որ մարդ մը «Ո՛հ, արի՛ւն, արի՛ւն», կ'աղաղակէ : Խորհնցաւ թէ մարդը, ուղղմադաշտէն նոր բերուած ըլլալով, տակաւին արիւնհեղութիւններուն վրայ կը դառանցէ : Գնաց անոր քով և ջանաց Քրիստոսի վրայ խօսիլ, որպէս զի ձակատամարտի տեսարանները մոռցնէ : «Պատուելի», ըսաւ մարդը տկար ձայնով, «ես ձակատամարտի վրայ չեմ խորհիր, այլ Քրիստոսի արեան վրայ», և անգամ մը ևս «արի՛ւն» փոփոսալով աւանդեց հողին :

Միրելիներ, կ'ուզէ՞ք որ ձեր բոլոր մեղքերը լուացուին : Անա արիւն՝ մեղաց թողութեան համար թափուած : Առանց արեան հեղման պիտի չըլլար թողութիւն : Աստուած կ'ըսէ ձեզի, «Ձեր մեղքերուն չեմ նայիր, եկէ՛ք, վազեցէ՛ք և թողութիւն առէ՛ք» : Ուրիշ ի՞նչ կըրնայ ընել ձեր փրկութեան համար : Մի ծաղրէ՛ք և արհամարհէ՛ք հրաւէրը, այլ ձեր գլուխը խոնարհեցնելով աղաղակեցէ՛ք, «Ով Տէր Աստուած, թող Որդւոյդ արիւնը մաքրէ զիս ամէն մեղքէ :» Արիւնը բաւական է :

Գիտէ՛ք թէ ժեռուտ վայրերու վրայ կառք վարելու պահուն շատ բան կախում ունի անիւներու զսպակէն : Կառավար մը մեռնելու պահուն աղաղակեց. «Չառի՛վայրի վրայ եմ և չեմ կրնար զսպակներս կառավարել :» Գրեթէ նոյն միջոցին մեռաւ Աստուծոյ հաւատարիմ ծառայ մը : Կինն ու սիրելիներն հաւաքուած էին անոր սնարին քով, և վերջին վայրկեաններուն մէջ աղաղակեց, կարծես երկինքը բացուած գտնելով իր առջեւ. «Ի՞նչն է ներս կը սուրամ Գառնուկին արեամբ լուացուած :» Ի՞նչ մխիթարութիւն էր այս անոր սիրելիներուն. քառութեան արիւնը ի՞նչ մխիթարութիւն եղած ըլլալու է անոր իր վերջին ժամերուն մէջ :

Միրելիներ, եթէ կ'ուզէ՛ք այս սուրբին վախճանին նման վախճան մը ունենալ, Քրիստոսի արեան գիմնելու էք : Աստուծոյ խնդրենք որ մեզի ըմբռնել տայ այս մեծ ճշմարտութիւնը :

ՊԱՏՃԱՌԱՆՔ

Ա.

Բնարանս է «կ'աղաչեմ քեզի, զիս հրաժարուած սեպէ» (Ղուկ. Ժ. 19) : Քրիստոս ճաշի հրաւիրուած էր հարուստ Փարիսեցիէ մը, և կը թուի թէ Փարիսեցին իր բարեկամներն հաւաքած էր Քրիստոսը բռնելու տեսակ մը դաւադրութեամբ : Անոնք ուշի ուշով կը գիտէին Յիսուսի շարժումները : Ջրգողեալ մարդ մը կը բերուի անոր առջև, որպէս զի նային թէ ի՞նչ պիտի ընէ : Քրիստոս կը կարգայ անոնց սիրտերը, ուստի բաթ օրը բժշկել : Լուռ կը մնան անոնք. չեն ուզեր բաթ օրը բժշկել : Լուռ կը մնան անոնք. չեն ուզեր պատասխանել՝ վախնալով որ կը մատնեն իրենց խորհուրդը : Ապա Քրիստոս ուրիշ կերպով կ'ուզէ իր հարցումը, և կ'ըսէ, եթէ ձեզմէ մէկուն էջը կամ եզը հորը լինայ, պէտք է՞ որ շուտով հանէ զայն Շաբաթ օրը : Եթէ կը բժշկէ մարդը, վասն զի Փարիսեցիներն ու Յետոյ կը բժշկէ մարդը, վասն զի փառաստանել իրեն : Այնուհետև Օրինականները չկրնան պատասխանել իրեն : Այնուհետև կը խօսի հացկերոյթին վրայ և կը սորվեցնէ խօսարար ըլլալ : Երբ մէկը սեղան տայ, մարդիկ կը վազեն նարհ ըլլալ : Երբ մէկը սեղան տայ, ամէնն ալ կ'երթան : Իսկ երբ Աստուած սեղան տայ, ամէնն ալ կ'սկսին պատճառանք յերկրի և չեն ուզեր երթալ : Առաջին պատճառանքն այն է զոր Ադամ ըրաւ, ըսեալով, «Կինը զոր ինձի տուիր, ան ինձի տուաւ ու տեղով, «Կինը զոր ինձի տուիր, որ հրաժարեցան երթալէ՛ պատճառու :» Այս մարդիկը որ հրաժարեցան երթալու : Ուստի յերկրեցին, իրական արգելք չունէին երթալու : Արբեցողը, անառակը, առեւտրականը, քաղաքացին, բողոքը, ամէնն ալ իրենց պատճառանքն ունին : Եթէ Աստուած ամէնուն խօսքին կարեւորութիւն տար իրենց

պատճառանքին մասին և ամէն խաբեբայ իր գերեզմանը գլորէր, գալ կիրակի շատ քիչ մարդ կու գար եկեղեցի, շատ քիչ գործ կ'ըլլար հրապարակի վրայ և քանի մը շաբաթէն խոտ կը բուսնէր փողոցներուն մէջ: Մեզք սնուցանող ամէն անձ պատճառանք մը ունէր, իբր թէ Աստուած զայն հրաւիրած ըլլար ժանտախտէ վարակուած քաղաք կամ հիւանդանոց մը երթալ, կամ ցամաք ճառախօսութեան մը և կամ զգուելի ուսուարիկի բանի մը ուկնդրել որ բնաւ իրենց օգուտ չունի:

Քննեք պատճառանքները կամ չքմեղանքները: Ամէնն ալ սուտ են: Ամէնն ալ դուր թեւազրութիւն: Եթէ մեղաւորը պատճառանք մը չունենար արդէն, դեն անոր շատ մօտ էր և պատրաստ թեւազրել բան մը Սբ. Գրոց ճշմարտութեան մասին, կամ ուրիշ ունէ բան: Յիշուած չքմեղանքներէն մին էր թէ հրաւիրուած մարդը գետին մը գնած էր և պիտի երթար տեսնել զայն: Անշարժ կալուած ու գետիններ շատ մարդիկ գուրս կը պահեն Աստուծոյ թաղաւարութենէն: Սուտ էր ըսել թէ պիտի երթար զայն տեսնել այն ժամանակ, վասն զի պարտ էր տեսած ըլլալ, երբ դեռ չէր գնած: Երկրորդ մարդն ըսաւ թէ եզ գնած է և պիտի փորձէ գանձնք: Այս ալ ուրիշ ստախօսութիւն մը: Եթէ չէր փորձած երբ դեռ չէր գնած, պարտ էր փորձած ըլլալ և կրնար փորձել ինչպէս սեղանէն առաջ նոյնպէս ալ յետոյ: Բայց երրորդն ամէնէն տխմար և ամէնէն գէշ պատճառանքն յառաջ բերաւ: Ըսաւ թէ կին մը առած է և չկրնար գալ: Ինչո՞ւ չտանէր իր հետ կինն ալ: Ան իրեն չափ պիտի ախորժէր սեղանէն և պիտի ուրախանար նոյնքան որքան ունէ նոր հարս:

Ասոնք ապուշ չքմեղանք կը թուին, բայց աւելի ապուշ չեն քան աժմու չքմեղանքները: Արդարեւ մարդիկ

հեղափոխութեան ակաբի գէշ պատճառանք յառաջ կը բերեն: Կ'ըսեն թէ չեն կրնար Սբ. Գրոց հաւատալ, շատ խորհրդաւոր է այն: Անհաւատներ, սկիստիկներ, համայնատուածեաններ, Աստուածեաններ ըսին թէ չեն հաւատար Սբ. Գրոց: Բայց երբեք կարգացած էին: Կամ կարգացի՞ն այնպիսի խնամով որով կը կարգան ուրիշ ունէ գիրք: Սա էր անոնց առարկութիւնը. Եթէ ամէն ոք հասկնայ ամէն ինչ որ կ'ըսուի Սբ. Գրոց մէջ, Աստուծոյ գիրքը չըլլար այն: Եթէ Քրիստոնեաներ, Աստուածաբաններ քառասուն յիսուն տարի ուսումնասիրելէ ետեւ կ'սկսին հասկնալ զայն, ի՞նչպէս կրնան մարդիկ յուսալ թէ պիտի հասկնան զայն առաջին ընթերցումով: Տղայ մը առաջին օրը որ զպրոց կ'երթայ՝ կրնայ այլուրեն մը չգիտնալ: Սակայն այդ չապացուցաներ թէ զպրոցը խեղճ է՝ առաջին օրէն տղուն քերականութիւն, թուաբանութիւն և երկրաչափութիւն չսորվեցնելուն համար: Ուրիշ մը ըսաւ, Աստուած խիստ տէր է: Ոչ, Աստանային սուտերէն է այդ: Աստանան է խիստ տէրը: Նիւ Եորքի հոչակաւոր մէկ բանտին դրան վերել գրուած է. «Անօրէններուն ճամբան դժուարին է:» Ասգրուած է. «Անօրէններուն ու մեղաւորներու բանտարկեալներուն, խաղամուկներուն ու մեղաւորներուն թէ Աստանայի լուծը քաղցր է: Ամէնէն զժնգակն է: Աստուծոյ ծառայելը զժնգակ: Ի՞նչպէս պիտի հնչէ այն դատաստանին օրը: Շատեր կ'ըսեն թէ դժուարին չէ, դայց սաստիկ պայքար կայ: Միթէ պայքար չէ՞ ամբողջ կեանքը: Ոմանք կ'ըսեն թէ չար են: Յիսուս ճիշտ այդպիսիներու համար եկաւ: Ոմանք կ'ըսեն թէ շատ աշխարհասէր են, շատ կարծրասիրտ: Այս ալ սուտ չէ: Յիշեցէք ի՞նչ ըրաւ Աստուած Յովհաննէս Պրնեաէ: Յիշեցէք ի՞նչ ըրաւ Աստուած Յովհաննէս Պրնեաէին, և նոյն իսկ խաչին վրայ կախուող աւաղակին: Աստ-

ուած արդէն խի հաշտուած է, մեղաւորին իր հետ հաշտուելուն պէտք չունի: Ինք կը պատրաստէ մեղաւորը: Սրտառուչ պատմութիւն մը կայ Անգլիացի հօր մը և որդւոյ մը վրայ որոնք իրարմէ օտարացած էին, բայց հաշտուեցան միոյն կնոջ ու միւսին մօր մահուան անկողնին քով: Հայրը խիստ էր, բայց հաշտուեցաւ մահամերձ մօր աղօթքներով: Այսպէս եղաւ Աստուծոյ ալ: Մեղաւորը լքած էր զայն, Աստուած հեռացած էր մեղաւորէն, բայց Աստուած ու մեղաւորը միացան մեր Տէր Յիսուս Քրիստոսի մահով:

Տեսանք թէ Քրիստոսը չընդունելու մասին այժմու պատճառանքներէն մին է թէ խիստ տէր է ան, թէ շատ դժուար է Քրիստոնեայ ըլլալ, և թէ Քրիստոս չընդունիր ամբարիշտները: Արդ կը դառնամ ուր սկսայ և կը կրկնեմ թէ, երբ կը հրաւիրուիք Քրիստոսի գալ, չէք հրաւիրուիք անհաճոյ նիւթի մը վրայ ցամաք ատենախօսութեան մը ունկնդրել, այլ հարսանեկան խնձոյքի մը կը հրաւիրուիք: Տէրը կ'ըսէ, «Երանելի են անոնք որ Գառնուկին հարսանեաց ընթրիքին կանչուած են:» Կեանքիս մէջ շատ հրաւերներու չեմ պատասխանած, բայց չեմ ուզեր այս հրաւերը մերժել: Կը փափաքիմ մանաւանդ այս ընթրիքին ներկայ ըլլալ քան ըսկանդակ աշխարհը շահիլ: Կ'ուզեմ հոն ըլլալ և Իսահակի, Յակոբի և Աբրահամու հետ սեղան բազմիլ: Գառնուկին հարսանեաց ընթրիքին կանչուիլ՝ ուրախութեան ու ցնծութեան հրաւեր է թագաւորներու թագաւորին և փառաց Տէրոջ կողմէ այր թէ կին ամէն անհատի ուղղուած: Անձնական հրաւեր չէ, այլ ընդհանրական՝ «Ելիր ձամբաները ու ցանդերը, և գտածներդ ստիպէ հոս աններու, որպէս զի տունս լեցուի:» Հրաւիրէ «աղքատները ու պակասաւորները և կազերը ու կոյրերը» հարսանեաց ընթրիքին, զոր մեծ ծախքով պատրաստած է

մեր օրհնեալ Փրկիչը: Ըսի թէ մարդիկ Քրիստոնէական պատմութեան մէջ շատ կանուխ սկսան պատճառանք յատճ ըրել և տակաւին կը ըրերն: Հաղար ինքնաբար տարիներ անցած են և տակաւին պատճառանք կը ըրերն: Մին զոր շատ յաճախ կը լսենք՝ սա է անք կը ըրերն: Մին զոր շատ յաճախ կը լսուր թէ չեն ուզեր Քրիստոնեայ ըլլալ, վասն զի շատ տխուր պիտի ըլլան, կախերես և վերէն վար կոճկուած, զուրկ ամէն զուարճութենէ և ուրախութենէ մինչև երկինք երթան, ուր յաւիտեան երջանիկ պիտի ըլլան: Մենք այդ երջանիկ ապագային կ'սպասենք, բայց, փառք Աստուծոյ, հոս ալ հաճոյք ունինք: Արդարև ոչ ոք երջատուծոյ, հոս ալ հաճոյք մարդու չափ: Ան կրնայ վեր նիկ ըլլալու է Աստուծոյ մարդու չափ: Ան կրնայ վեր նայիլ և ըսել, «Աստուած իմ հայրս է,» «Քրիստոս իմ Փրկիչս է, և եկեղեցին իմ մայրս:» Ով որ կը կարծէ թէ Քրիստոնէական կեանքը անդու ուրախութեան կեանքէ տարբեր բան է, կը խաբուի: Անցեալները զինետան մը քովէն անցնելու պահուս նշանատախտակ մը տեսայ «Իմէ և ուրախ եղիր» վերատուրթեամբ: Ինչո՞ք, կոյր ու զիւրախա՞ր մարդիկ, եթէ կը կարեկցի, կոյր ու զիւրախա՞ր մարդիկ, եթէ կ'ուզէք ձեռն թէ այդպէս երջանիկ պիտի ըլլան: Եթէ կ'ուզէք ուրախ ըլլալ, պէտք է որ գաք կենդանի աղբիւրը որ Աստուծոյ աթոռէն կը բխի: Այն ժամանակ կ'ունենաք ճշմարիտ հաճոյք: Աստուծմէ հեռու ապրողը չկրնար ճշմարիտ հաճոյք ունենալ, Շարունակ կը տենչայ բաճճմարիտ հաճոյք ունենալ, Ծարունակ կը տենչայ բաճճմարիտ հաճոյք ստանալ, կը տենչայ բանի մը որ նի մը զոր չկրնար ստանալ, կը տենչայ ստանալ կրնայ իր ծարաւը յագեցնել և զոր չկրնար ստանալ մինչև զայ կենդանի աղբիւրը: Բարեկամներս, այդ ալ զմարդիկ շնորհքէ հեռու պահելու Սատանայական հարքէ: Որչափ աւելի բարձրանայ մարդո գէպ երկինք, այնչափ աւելի ուրախութիւն, խաղաղութիւն ու զուարճափ աւելի ուրախութիւն, թօթափէ տխրութիւնը: Նախութիւն կ'ունենայ: Կը թօթափէ տխրութիւնը: Եթէ ևս վազելով երթամ անոր և յեցէք մահապարտին: Եթէ ես վազելով երթամ անոր և

ձեռքս երկարելով ըսեմ, «Ահա թողութեան հրամանա-
գիր մը կառավարչէն ստորագրուած,» որտու՞մ արտուր
կ'ըլլա՞յ այլևս: Բրիտոս այսպէս մեզի խեղճ մահա-
պարտներու թողութիւն կը բերէ: Քաղցէ տառապո-
ղի մը կ'երթամ հաց կու տամ: Կը տխրի՞ ան: Խեղճ
մարդ մը ծարաւէն կը տոչորի և ես դաւաթ մը պաղ
ջուր կու տամ: Կը տխրի՞ ան: Բրիտոս կենդանի ջու-
րի աղբիւր ունի և կը հրաւիրէ ամէն ծարաւիներ գալ
ու խմել ձրիօրէն: Այս է ինչ որ կ'ընէ Բրիտոս: Մի
հաւատաք թէ Բրիտոսնէութիւնը ձեզ կը տխրեցնէ:

Տղայութեանս կ'ըսէի թէ մինչև մահուանս օրը
պիտի սպասեմ և յետոյ Բրիտոսնեայ ըլլամ: Կը կար-
ծէի թէ, եթէ հիւժախտ կամ ուրիշ երկարատև հիւան-
դութիւն մը ունենամ, առատ ժամանակ կ'ունենամ դար-
ձի գալու և միևնոյն ժամանակ աշխարհի լաւագոյն հա-
ճոյքները վայելելու: Այդ միջոցին Սատանային աղբի-
ցութեան տակ էի: Թէ մարդ եկեղեցիէ հեռու մնալով
աւելի հաճոյք կ'ունենայ՝ Սատանայի սուտերէն մին
է: Մի հաւատաք, այլ ընդունեցէք հարսանեաց ընթ-
րիքին ընդհանուր հրաւերը:



ՊԱՏՃԱՌԱՆՔ

Բ

Կրնամ երեւակայել թէ ոմանք կ'ըսեն, «Մր. Մու-
տի չգիտցաւ իմ վիճակս: Չգիտցաւ թէ ինչո՞ւ չեմ ըն-
դունիր Բրիտոսը: Ես տեղեկութիւն չունիմ թէ ընտ-
րեալներէն եմ:» Ո՛րքան անգամ կը լսեմ այս պատճա-
ռանքը: Ո՛րքան մարդիկ իրենց ձեռքերը կը ծախն՝
ըսելով, «Եթէ ես ընտրեալներէն եմ, պիտի փրկուիմ,
և եթէ չեմ, չեմ փրկուիր: Մնօգուտ է քու ջանքդ և
աշխատութիւնդ:» Ինչո՞ւ սա վաճառականներէն ո-
մանք չեն ըսեր, «Եթէ Աստուած զիս յաջող վաճառա-
կան մը պիտի ընէ, կ'ըլլամ՝ ուղեմ թէ չուղեմ, և եթէ
պիտի չընէ, չեմ ըլլար:» Եթէ հիւանդանաք և բժիշկը
ձեզի դեղագիր մը տայ, մի առնէք դեղը, պատուհանէն
դուրս նետեցէք դեղագիրը, վասն զի եթէ Աստուած
վճռած է որ մեռնիք, պիտի մեռնիք, և եթէ վճռած չէ,
պիտի առողջանաք: Եթէ այսպէս տրամաբանէք, կըր-
նաք նաև տուն չերթալ: Եթէ Աստուած ըսած է որ տուն
պիտի երթաք, կ'երթաք առանց քալելու՝ օդին մէջէն
թռչելով: Այս օրինակները ճիշտ ձեր պարճառանքնե-
րուն նման են: Կենաց ջուրը ձրի կը արուի ամէնուն:
Ոչ մէկ անդարձ հոգի ուէ՞ գործ ունի ընտրութեան վար-
դապետութեան հետ, ինչպէս ես չունիմ Չինու կառա-
վարութեան հետ: Պօղոսի այն թուղթը երկիւղած մար-
դոց գրուեցաւ: Մարդ մը նամակ մը կը գտնէ, բանա-
լով կը կարդայ թէ իր կնոջ մահուան վրայ կը խօսի:
Յետոյ կը նայի միւս կողմին և կը գտնէ թէ ուրիշ մար-
դու ուղղուած է: Ճիշտ այսպէս շատեր կ'առնեն Պօղոսի

թուղթը ուրիշ եկեղեցիներու ուղղուած և անձնական նամակ կը համարին: Դուք սա հրաւերը պիտի ընդունիք. «Ան որ կ'ուզէ՝ կենաց ջուրը ձրի առնէ»: Յիսուս իր յարութենէն վաթսուն տարի ետքը Յովհաննու եկաւ ու բաս, Այնչափ լայն, ընդհանուր, անպայման ըրէ հրաւերը որ մէկը սխալ չհասկնայ և չգայթակղի, այլ ամէն ոք յտակ ըմբոսնէ — «Ան որ կ'ուզէ՝ կենաց ջուրը ձրի առնէ»: Եթէ կ'ուզէք, կ'ուզէք, եթէ չէք ուզեր, չէք ուզեր: Կը կարծէ՞ք թէ Աստուած երկիր կու գայ ձեզի փրկութիւն տալ առանց ձեզի զօրութիւն տալու որ առնէք զայն և ապա ձեր չտանկուն համար կը դատապարտէ ձեզ յաւիտեան: Պարզեւին հետ զօրութիւն ալ կու գայ, և կրնաք ընդունիլ ու ապրիլ, եթէ կ'ուզէք: Այլեւս մի յուզէք ընտրութեան հարցը: Բուն խնդիրն է սա լայն հրաւերը. «Ան որ կ'ուզէ՝ կենաց ջուրը ձրի առնէ»: Թերեւս սապէս կը խորհի ընթերցող մը. Ես երբեք զբաղած չեմ ընտրութեան հարցով, և չեմ կարծեր թէ մարդիկ տխուր կ'ըլլան Քրիստոսեայ ըլլալով: Սակայն իրողութիւն է թէ կեղծաւորներ կան եկեղեցիներուն մէջ: Կը ճանչնամ եկեղեցիին մէջ նշանաւոր մարդ մը որ իմ յիսուն տակիս կերաւ: «Ձեմ ընդունիր այս հրաւերը այդ կեղծաւորներուն պատճառով»: Բարեկամս, եթէ երկիրք երթաս, շատ քիչեր պիտի գտնես հոն: Գալու աշխարհին մէջ կեղծաւոր պիտի չգտնուի, և եթէ չես ուզեր հանդերձեալին մէջ կեղծաւորի ընկերանալ, ընդունէ այս հրաւերը: Գիանալու ես թէ ամէն տեղ կեղծաւոր կայ: Առաքեալներէն մին կեղծաւորներուն իշխանն էր, բայց չգնաց երկիրք: Շատ կեղծաւոր պիտի գտնես եկեղեցիին մէջ: Հազար ինը հարիւր տարիէ ի վեր կան և հաւանորէն ալ պիտի մնան: Բայց քեզի ինչ:

Այս անհատական խնդիր է քու և Աստուծոյդ միջև: Կեղծաւորներ կենալուն համար չես ընդունիր հրաւերը: Ուրիշ մը կը խորհի թերեւս սապէս. «Ես առեւարական եմ, ժամանակ չունիմ: Հրդեհէ մը այնչափ արական եմ, ժամանակ չունիմ: Աստուծոյդ զբաղմանս որ բոլոր ուշադրութիւնս գրաւած է սա հարցը թէ ինչպէս պիտի վերականգնիմ»: Եթէ դու որ կայնիմ և ամէն դուրս ելլողի առջարկեմ ընդունիլ հրաւերս, վստահ եմ թէ հարիւրաւորներ պիտի պատասխանեն. «Մը.Մ ուտի, խնդրեմ, հրաժարուած սեպէ զիս: Ժամանակը շատ սուղ է ինձի համար. կ'աղաչեմ, ձգէ զիս հիմա»: Անցեալ քսան, երեսուն, քառասուն, յիսուն տարուան ընթացքէ կ'ընէիք որ ըսպէ մը չգտաք այս հրաւերին ընդունելու թեան յատկացնելու: Աշխարհի աղաղակը սա է այսօր. «Ժամանակը սուղ է, գործը խնամք և արթնութիւն կը պահանջէ և ուրիշ բանի ժամանակ չթոնուր»: Ձեզմէ ոմանք պիտի ըսեն, «Ձեմ կրնար սպասել, պէտք է տուն երթամ և աղաքը պառկեցնեմ, աւելի կարեւոր է այս»: Բարեկամներս, այս հրաւերն ընդունիլ աւելի կարեւոր է քան ուրիշ ուրիշ քան այս աշխարհի մէջ: Բան մը չկայ որ այս հրաւերն ընդունելու չափ կարեւոր ըլլայ այս աշխարհի մէջ: Քանի՞ արհեստաւորներ կան ընթերցողներու մէջ որ հինգ տարի աշխատած են իրենց արհեստը սորվելու համար, որպէս զի զիրենք ու իրենց ընտանիքներն ապրեցնեն քանի մը տարի — քառասուն կամ յիսուն տարի առ առաւելն: Քանի՞ արուեստագէտներ կամ մասնագէտներ կան որ տարիներով աշխատած են այնպիսի գաստիարակութիւն մը ստանալու համար, որով կեանքի ասպարէզը մտնեն ու մաքառին, և բոլոր այդ տարիներուն մէջ վայրկեան մը չեն գտած իրենց փրկութիւնը փնտոկու համար: Օրինաւոր պատճառաւորք է այս: Ըսէք Աստուծոյ թէ այսօր ժամանակ չունիք, կամ թող այսօր, այս պա-

հը, ըլլայ այն ուր, ի՛նչ ալ ըլլայ, պիտի ըսէք. «Աստուծոյ շնորհքով կ'ընդունիմ հրաւերը և Գառնուկին հարսանեաց ընթրիքին կը վազեմ»։

Գարձեալ ուրիշ մը կը խորհի թերևս սապէս. «Ես ժամանակ ունիմ։ Եթէ համոզուէի թէ կրնամ Քրիստոնեայ ըլլալ, հոս կը նստէի ժամերով, ամէն զործ լքելով, և կը վազէի Աստուծոյ թագաւորութիւնը։ Բայց Քրիստոնեայ ըլլալու յարմարութիւն չունիմ։ Այս է զժբախտութիւնը»։ Սակայն, բարեկամ, Աստուած ի՛նչ կ'ըսէ. «Ելիր ճամբաները և ցանդերը, և աղքատները ու պակասաւորները և կազերը ու կոյրերը հոս մտցուր,» — ամէնն հրաւիրէ առանց յարանուանութեան և դաւանանքի, գիրքի և ազգայնութեան խտրութեան, հոգ չէ՝ հարուստ ըլլայ թէ աղքատ։ Եթէ Աստուած ինզիր չյարուցաներ ձեր յարմարութեան մասին, պէտք չէ որ նայիք թէ յարմար հանդերձ ունի՞ք։ Զօրակոչի ժամանակ կը տեսնէք երբեմն մարդ մը որ կու գայ մաքուր մետաքս գլխարկով, փայլուն կօշիկներով, այծի մորթէ ձեռնոցներով և պատուական նոր հագուստով, յետոյ անմիջապէս ուրիշ մը պատառատուն ու ցեխոտ ողորմելի տարազով։ Բայց երկուքն ալ կը մերկանան իրենց հագուստը և կը հագնին գինուորական նոյնաձև զգեստը։ Նմանապէս զուք երբ գաք ու ըսէք թէ յարմար չէք, վայելուչ զգեստ չունիք, բաւական արդար չէք, յիշեցէք թէ ձեզի երկնային համազգեստ պիտի տայ և Գառնուկին հարսանեաց ընթրիքի սեղանը պիտի բազմիք։ Հոգ չէ թէ ձեր սիրտը ո՛րքան սե ու պիղծ է, միայն ընդունեցէք Յիսուս Քրիստոսի հրաւերը և ինք ձեզի յարմարութիւն պիտի տայ սեղան բազմիլ միւսներուն հետ։ Քանի՞նե՛ր կ'աղաղակին անդադար. «Ես շատ չար եմ, պարսպ բան է ջանալ որ Քրիստոնեայ ըլլամ»։ Այս

է Սատանային թերազրութիւնը։ Երբեմն կ'ըսէ ան. «Դուն փրկուելու պէտք չունիս։ Բաւական բարի ես արդէն»։ Եւ սեւ սիրտ կեղծաւոր մը ցուցնելով կ'ըսէ, «Ասոր նայէ և անս թէ դուն ո՛րքան աղէկ ես բաղդատար»։ Սակայն մարդն յետոյ կը տեսնէ իր սըրտին սեւութիւնը և կը տանջուի խղճին խռովքէն։ Այն ժամանակ Սատանան կ'ըսէ, «Այնչափ չար ես որ չես կրնար փրկուիլ։ Աստուած չփրկեր քեզի պէս մարդիկը։ Շատ պիղծ ես։ Պէտք է որ քիչ մը մաքուրիս և յետոյ ջանաս Աստուծոյ փրկել տալ քեզ»։ Այսպէս կը ջանան մարդիկ բարեոքիլ և աւելի կը չարանան։ Աւետարանը կը պատուիրէ գալ ինչպէս որ էք։ Նախ խնդրեցէք երկնից թագաւորութիւնը — մի տընտընաք։ Եկէք ինչպէս որ էք։ Նկարիչ մը, անստակ որդիի մը պատկեր պատրաստել ուզելով, աղքատանոցները և բանտերը չըջնցաւ. նոյն մը գտնելու համար։ Օր մը փողոցին մէջ պատահեցաւ խեղճ մուրացիկի մը և հարցուց թէ կը հաճի՞ գալ իր աշխատանոցը և նկարուիլ։ Մարդն հաւանեցաւ։ Սակարկութիւնը կատարուեցաւ և նկարիչն իր հասցէն տուաւ անոր։ Որոշեալ ժամուն, մուրացիկը գալով ըսաւ նկարչին. «Ահա եկայ քեզի այն ժամադրութեան համեմատ զոր ըրի քեզի հետ»։ «Ի՛նչ ժամադրութիւն,» պատասխանեց նկարիչը. «Կը սխալիք դուք։ Իմ ժամադրութիւնս մուրացիկի մը հետ էր»։ «Այո, և ես այն մուրացիկն եմ։ Բայց նոր հագուստ հագայ քանի որ պիտի նկարուիմ»։ «Ես ձեզ չեմ ուզեր,» ըսաւ նկարիչը, «ես մուրացիկ մը կ'ուզեմ»։ Ընչոտ այսպէս շատեր Աստուծոյ կու գան իրենց անձնական արդարութեամբ, փոխանակ գալու իրենց պատառատուն հանդերձով։ Ըսած է մէկը թէ Աստուծոյ հանգերձատունը բացողները ողորմելի մեղաւորներն են միայն։ Եթէ կ'ուզէք անցորդէ մը դոյզ մը կօշիկ ստա-

նալ, պէտք է որ բոկոտն ներկայանաք: Կը յիշեմ տղայ մը որու ետ զոյգ մը կօշիկ տուի, և քիչ յետոյ դարձեալ բոկոտն տեսայ զինք: Հարցուցի թէ ի՞նչ բըտ կօշիկները, պատասխանեց թէ գործին չէր գար զանոնք հագնիլ, վասն զի եթէ հագնէր, իրեն բան տուող պիտի չըլլար: Բոպիկ կենալով օրը հինգ զոյգ կօշիկ կ'ստանար: Դուք ալ, եթէ կ'ուզէք Աստուծոյ գալ, մի հագուիք զարդարութիւնք: Աստուած կ'ուզէ մերկ մեղաւորները փրկիլ: Ձեր անձնական արդարութիւնը մէկ կողմ նետելով Աստուծոյ Որդւոյն եկէք, և ան պիտի ընդունի ձեզ:

Կը յիշեմ մէկը որ նաւազ եղաւ տարիներ առաջ: Շատ անկարգ և անհոգ կեանք մը կը վարէր: Ազօթող մայր մը ունէր, բայց մեռաւ: Քանի՜ քանի մարդիկ մայրերու շնորհիւ փրկուած են անոնց մահէն ետեւ: Թերեւս այս ալ երբեմն կը խորհէր իր մօր ազդեցութենէն չարժուած: Օր մը փափաքեցաւ լաւադոյն կեանքի մը հետեւիլ: Երբ ցամաք ելաւ, ընտրեց Ազատ Որմնադիրներուն երթալ: Դիմեց, բայց յետ քննութեան հասկցուեցաւ թէ ինք սարսափելի արբեցող է և մերժուեցաւ: Յետոյ ուզեց ուրիշ գաղանի ընկերութեան մը անդամակցիլ, և դարձեալ մերժուեցաւ: Օր մը փողոցէ մը անցնելու պահուն տետրակ մը ստացաւ անձանթէ մը: Ազօթքի ժողովի հրաւեր էր: Գնաց և Քրիստոս ընդունեցաւ զայն: Կը յիշեմ դեռ թէ ի՞նչպէս ելաւ ժողովի մը մէջ ու պատմեց թէ մերժուած էր Ազատ Որմնադիրներէն և ուրիշ գաղանի ընկերակցութենէ մը, բայց Քրիստոսէ ընդունուած էր իր իսկական վիճակով: Շատ ընկերակցութիւններ և միութիւններ չեն ընդունիր ձեզ, բայց ինք մեղաւորներու Փըրկիչը — կորուսածներու Ազատարարը — կ'ընդունի ձեզ և կը հրաւիրէ գալ ինչպէս որ էք:

Ոմանք կը խորհին թէ իրենք խնայական դժուարութիւն ունին և չեն կարող հաւատալ: Օր մը մարդ մը ինծի բտաւ. «Ձեմ կրնար:» «Ի՞նչ չես կրնար,» ըսի: «Ձեմ կրնար հաւատալ,» ըսաւ: «Որո՞ւ:» «Ձեմ կրնար հաւատալ,» կրկնեց: «Որո՞ւ,» հարցուցի դարձեալ: «Ինքզինքիս,» պատասխանեց: Պէտք չունէր ինքզինքին հաւատալու: Բարեկամներ, սուտ հանեցէք դուք ձեզ ամէն ժամանակ, բայց հաւատացէք Քրիստոսի ճշմարտութեան: Եթէ մէկը ըսէ ինծի, «Պատուելի, սուտ խօսեցար, խաբեցիր զիս,» իրաւունք ունենայ թերեւ: Բայց ոչ ոք կրնայ երբեք ըսել թէ Աստուած խաբեց կամ սուտ խօսեցաւ: Եթէ Աստուած բան մը ըսէ, ճշմարիտ է: Մենք չենք յորդորեր ձեզ երկրի վրայ սեէ մարդու հաւատալ, բայց կը յորդորենք հաւատալ Յիսուս Քրիստոսի, որ երբեք չտոնց ու երբեք չխաբեց: Եթէ մէկն ըսէ թէ չկրնար անոր հաւատալ, սուտ կը խօսի:

Գարձեալ ուրիշ մը կ'ըսէ, «Ձեմ զգար, չեմ կըրնար զգալ:» Ահա ամենավերջին չքմեղանքը: Ասով եկողը բաւական մօտ կու գայ Աստուծոյ: Ոմանց համար ամէն բան զգացումէ կախեալ է: Ի՞նչ է ձեր զգացումը: Կը փափաքի՞ք փրկուիլ, Գառնուկին հարօսանեաց ընթրիքին ներկայ ըլլալ: Երբ մէկը զիս ճաշի հրաւիրէ, կ'ըսեմ, «Նայիմ, ի՞նչպէս կ'զգամ:» «Հիւանդ էք,» պիտի հարցնէ ան: «Ոչ, բայց կախում ունի ի՞նչպէս զգալէս:» Այդ չէ խնդիրը, այլ ընդունի՞լ թէ չընդունիլ հրաւերը: Մեզի ուղղուած հարցումը սա է, Պիտի ընդունի՞ք փրկութիւնը, պիտի հաւատա՞ք: Զգացումի խօսք չկայ բնաւ Սբ. Գրոց մէջ: Երբ ձեր կեանքի վախճանին մօտենաք և գիտնաք թէ քանի մը օրէն բոլոր երկրի Գառաւորին պիտի ներկայանաք, պիտի յիշէք այս ձեր զգացումի չքմեղանքը: Պիտի ըսէք թէ Մր.

Մտախի մտիկ ընել զացինք, բայց ժողովէն ետքը ազէկ չզգացինք, չզգացինք թէ իրաւունք ունէինք հրաւէրն ընդունելու: Այն ժամանակ Սատանան պիտի ըսէ, «Ես այդպէս զգացուցի:» Բայց եթէ ձեր յոյսը գնէք Խաչիալին վրայ, Սատանան չկրնար ձեզի գալ: Աստուծոյ խօսքին ապահնեցէք, և անհաւատութեան ալիքները չեն կրնար ձեզի գալել, հալածանքի ալիքները չեն կրնար ձեր վրայ խուժել, Սատանան և դժոխքի բոլոր զեւերը չեն կրնար ձեզի մօտենալ: Ըսէք, «Թէև անիկա զիս սպաննէ, ես անոր պիտի յուսամ — անոր խօսքին պիտի հաւատամ:»

Զլնցուցի բոլոր պատճառանքները: Եթէ լնցնէի, ուրիշ պատճառանք պիտի յերիւրէիք մինչև վաղը: Ի՞նչ պէտք է ընել բոլոր պատճառանքները: Ամէնը մէկտեղ ծրարել և ծրարին վրայ «Սատանայի ստութիւններ» պիտակը փակցնել: Չկայ չքմեղանք մը որ սուտ չըլլայ: Երբ Աստուծոյ աթոռին անջև կայնիք, ոչ ոք կըրնայ պատճառանք մը տալ: Եթէ աղէկ պատճառ մը ունիք, մի ձգէք զայն, ի՞նչ ալ ըսեմ ես: Տարէք Աստուծոյ ասեանը և ներկայացուցէք, իսկ եթէ չունիք, ձգեցէք և սիրող Փրկչի մը զիրկը վաղեցէք: Դիւրին է պատճառանք գտնել՝ դժոխքը գոհացնելու համար, բայց ոչ երկիրքը գոհացնելու համար: Եթէ չքմեղանք կ'ուզէք Սատանան պատրաստ է միշտ ձեզի տալ: Բարեկամներ, հիմա ընդունեցէք հրաւէրը: Մոռցէք ձեր գործերը և տուները մինչև ընդունիք այս հրաւէրը: Մի ուտէք, մի խմէք մինչև ընդունիք այս հրաւէրը, որ ձեզի համար ամէնէն կարեւոր բանն է ընդարձակ այս աշխարհին մէջ: Մի արհամարհէք զայն, կ'ընդունի՞ք: Կրնամ երեւակայիլ ընթերցող մը, որ ըսէ ինձի. «Ես երբեք կրօնք չեմ արհամարհեր:» Բայց երբ հացկերոյթի հրաւէր մը գայ ինձի և չպատասխանեմ կամ պտտեմ

հրաւիրողիը, միթէ արհամարհած չե՞մ ըլլար զայն: Դուք ալ, եթէ կարեւորութիւն չընծայէք հիմա փրկութեան հրաւէրին, միթէ չէ՞ք արհամարհեր զայն: Ընթերցողներէս մին պատրաստ է այս վայրկեանիս նստիլ և սապէս չքմեղանք մը գրել. «Տեղ եւ բուսական: Երկնից թաղաւորին. Այսօր ծառաներէդ մէկուն ձեռամբ ստիպողապէս հրաւիրուեցայ Աստուծոյ Որդւոյն հարսանեաց հանդէսին գալ: Կ'աղաչեմ, հրաժարուած սուպէ զիս:» Ընթերցողներուս մէջ կա՞յ, կ'ըսեմ, մէկը այր կամ կին, որ յանձն առնէ ստորագրել այս չքմեղողիը: Կա՞յ մէկը, այր կամ կին, որու աջ ձեռքը պիտի չմտնար իր արուեստը, կամ լեզուն պիտի չփակչէր իր քիմքին, եթէ այսպիսի փորձ մը ընէր: Եւ սակայն ձիշտ այս է ինչ որ կ'ընէք դուք, եթէ կարգաք այս հրաւէրը և անցնիք երթաք: Ո՞վ պատրաստ է գրել սապէս. «Տէրերու Տէրոջ և փառաց Թաղաւորին. Այսօր (տեղ եւ բուսական) ծառաներէդ մէկուն ձեռամբ ստիպողապէս հրաւիրուեցայ ներկայ ըլլալ հարսանեաց ընթերիքին: Կը փութամ ընդունիլ:» Ձեզմէ ո՞վ պիտի գայ և ըսէ. «Աստուծոյ շնորհքով ես կ'ստորագրեմ:» «Ես կ'ստորագրեմ Աստուծոյ շնորհքով և կը միանամ բարեյշխասակ մօրս որ հոն գնաց:» «Ես կ'ստորագրեմ ու կ'ընդունիմ հրաւէրը, և կը միանամ իմ սիրեցեալ կնոջս կզմ զուգիս:»

Հոս յիշեմ միջադէպ մը: Քաղաքի մը մէջ, ուր շաբաթներէ ի վեր կը քարոզէի, վերջին օրը շաբաթախանձեցի ունկնդիրներս որ ինձի միանան հանդերձակին մէջ: Եստ յուզիչ էր վերջին անգամ կայնիլ ունկնդիրներու խուռն բաղմութեան մը անջև ու մտածել թէ այլևս պատեհութիւն պիտի չունենաք զանոնք Քրիստոսի հրաւիրելու: Ըսի թէ այլևս պիտի չտեսնեմ զիրենք, և յորդորեցի ընդունիլ Տէրը և ին-


ծի միանալ հարսանեաց այն ընթրիքին մէջ: Երբ ժողովն աւարտեցաւ, բարձրահասակ տիկին մը եկաւ խորհրդակցութեան սրահը: Հազիւ մտած էր ան, և անա հասաւ ուրիշ տիկին մը նայնպէս բարձրահասակ և միւսը ողջագուրելով լացաւ: Քիչ յետոյ երրորդ տիկին մը եկաւ և միւս երկուքին հետ ողջագուրուեցաւ: Գացի նայիլ թէ ի՛նչ կայ և իմացայ թէ իրարմէ հեռու տեղեր նստած էին քարոզին ժամանակ, բայց Աստուծոյ խօսքէն նետահարուած սիրտերով եկած էին խրատ խնդրել: Չորրորդ մը, մատաղատի օրիորդ, եկաւ և ըսաւ, «Պատուելի, ես կ'ուզեմ Քրիստոնեայ ըլլալ»: Երիտասարդ տիկինէ մը խնդրեցի որ խօսի անոր: Ուշ վերադարձաւ տուն և մօրը, որ իրեն կ'սպասէր, ըսաւ, «Ես Գառնուկին հարսանեաց հրաւէրը ընդունեցայ»: Հայր և մայր երկար խօսակցեցան իրենց գաւկին փրկութեան վրայ: Ուրբաթ գիշեր էր, Շաբաթ օրիորդն հիւանդացաւ և ընդ հուպ հասկցուեցաւ թէ կարմրախտ ունէր: Քանի մը օր յետոյ սա նամակն ստացայ:

«Մր. Մուտի, սիրելի տէր, ցաւով կը ծանուցանեմ ձեզի թէ սիրելի աղջիկը, որու նկատմամբ գրեցի ձեզի Երկուշաբթի օր, մեզմէ առնուեցաւ մահուամբ: Մեր վիշտը սակայն մեծ չափով մեղմացած է, վասն զի երէկ ըսաւ թէ ինք Յիսուսի քով պիտի երթայ, և չատերու համար պատուէրներ տալէ ետեւ ըսաւ որ Մր. Մուտիի և Մր. Սանքիի իմացնենք թէ ինք Քրիստոնէի երջանիկ մահով մեռաւ: Չեր աղօթքները կը խնդրենք, Պատուելի, որպէս զի Տէրը շարունակէ տալ մեզի մխիթարութիւն և բաւականաչափ համբերութիւն ու զօրութիւն և մեր միւս փոքրիկներուն առողջութիւն: Յիշեցի երգին սա մէկ տողը. 'Վերերն ունինք տուն երջանիկ,' և անմիջապէս փորձեց երգել 'Մեր հօրը տունն մեզի տեղ կայ': Այս եղաւ վերջին բանը զոր գիտակ-

ցարար ըրաւ: Աղջիկս փափաքեցաւ նաև որ Ուրբաթ գիշեր իրեն խօսող տիկինն ալ գիտնայ թէ Քրիստոնէի երջանիկ մահով մեռաւ:»

Երբ զայս լսեցի, ըսի Մր. Սանքիի, «Այս բաւական է մեր ամբողջ աշխատանքը փոխարինելու համար: Ահա հոգի մը փրկուած, զոր պիտի տեսնենք յարութեան առաւօտուն:»

Սիրելիներ, ընդունեցէք հրաւէրը: Ապա, ի՛նչ ալ գայ, հիւանդութիւն, ցաւ, ևն., անշուշտ ներկայ պիտի ըլլաք Գառնուկին հարսանեաց ընթրիքին:



« Ազգային գրադարան



NL0161141

